

281

Ե-77

ՀԱՅ ԵՐԻՏ. ՔԵՒՍ. ԸՆԿԵՐ.

# ԵՐԳԱՐԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ

Ե Ի

ԱԶԳԱՅԻՆ

ՏՊԱԳՐ.

Զ. Ն. ՊԵՐՄԻՐԵԱՆ

Գ. Ա. ՀԻՐՔԷ

1914



281

5-77

ՀԱՅ ԵՐԻՏ. ՔՐԻՍՏ. ԸՆԿԵՐ.

969 P.

# ԵՐԳԱՐԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ

Ն Ի

ԱԶԳԱՅԻՆ

ԿՐԻՍՏ

ՏՊԱԳՐ.  
Զ. Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Գ. Ա. ՀԻՐԷ  
1914

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

2007 159 029



Ընկերակցութիւնս խորապէս համոզուած երգին բարոյացուցիչ, ազնուացնող և խանդավառող դերին, այս կարեւոր պահանջքին գոհացում տալու բարի առաջադրութիւնով և իր սկզբունքին ու ուղղութեան համաձայն լայն ոգիով մը կուգայ օժտելու ըստը անդամակցութիւնն ու համակիր ժողովուրդը նոր ԵՐԳԱՐԱՆ ով մը:

Գերազանցապէս փափաքող՝ Քրիստոս սնէական տարբեր հատուածները իրար միացնելու ոչ-յարանուանական գեանի մը վրայ, երգերու ընարութիւնը կատարած է մեր նախնեաց կրօնաշունչ ու հոգեսարսուռ Շարականներէն, ազգային կեանքն ու հոգին պատկերացնող ժողովրդական ու ազգային երգերէն, ու օտար Տին ու նոր անտիպ երգեցողութիւններէն՝ զորս Վեր. Հ. Խանդավառ մանուսորապէս այս երգարանիս համար թարգմանարար հայացուցած է:

Այս երգարանը նաև շիշատակութիւնը պիտի մնայ միջ-յարանուանային սխրալի համերաշխութեան այն գեղեցիկ փառաբանանքին, որ կատարուեցաւ այս տարի Ս. Ծննդեան համար սարքուած հանդէսին մէջ, ուր Հայ-Լուսաւորչակոն Եկեղեցւոյ Գարաց Գասը անմահական շարականներու եռաձայն երգեցողութիւնովը և Հայ-Աւետարանականներու երգչախումբը՝ քառաձայն երգե-

րովը իրապէս գեղեցկութիւնը երգեցին « Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ Տաճութիւն» ի երբակի եղբայրակցութեան:

Շնորհակալութիւն այս առիթով խանդավառուած թողովուրդին՝ որ այս միութեան նախափորձին իրականացման իր փափաքը արտայայտեց հրատարակելի Երգարանին համար տուած նուէրներովը:

Թէրեւս աւելորդ չըլլար քանի մը բացատրութիւններ տալ երգերու ընտրութեան մասին:

Ընկերակցութիւնը իր նիւթական սնրաւական միջոցներուն համար կարող չեղաւ իր բաղձաւքին համեմատ աւելի ճոխ և ընդարձակ ընելու Երգարանին ծաւալը: Անոր համար արդէն սպուած հոգեւոր երգերը ցանկէն դուրս թողուլ հարկ տեսաւ: Երանականներու ընտրանքը կատարուած է Հայ-Ղուս. Եկեղեցիին հմուտ Գպրապետին կողմէ, և անշուշտ ստիպուած՝ զանց առնելու այն տաղերն ու շարականները, որոնք կամ շատ քիչ առիթներով կ'երգուէին, և կամ առանց առաջնորդի երգուելու յարմարութիւն չունին:

Հոգեւոր երգերու մեծ մասը թարգմանուած են Alexander's Revival Hymn անուն Երգարանէն: Հետեւաբար եղանակը գտնելու համար պէտք է նոյն գրքին դիմել նշանակուած թիւերուն համաձայն:



Փ Ա Հ Ի Ր Է Թ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԳՐԻՍ. ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ե Ի

ԻՐ ԿԱՆՈՆԱԳՐԻՆ ՇԻՄԱԿԱՆ ՄԱՍԵՐԸ



Ե. Ք. Ընկերակցութիւնը, որ ամբողջ աշխարհին մէջ էր հսկայ գործունէութիւնովը, բարեբար ազդեցութիւնովը և միլիոնաւոր անդամներովը ամէն ցեղէ ու լեզուէ, գերազանցապէս ապրելու իրաւունքը ունեցած է, չէր կըրնար Հայ-Քրիստոնէին պէս միշտ գործելու, յառաջդիմելու և քրիստոնէութեան պատմութեան մէջ այնքան սխրալի քաջագործութիւններ ունեցող ցեղի մը ուշադրութիւնէն ու հետաքրքրութիւնէն կարելի չէր որ անտեսուէր, և իր կարելի համեստ միջոցներով չմիանար ինքն ալ իր «Հայ Քրիստոնէայ Երիտասարդը» պատրաստելու քրիստոնէական բարձր ու շինիչ սկզբունքներուն և զգացումներուն համեմատ:

Այս հրամայական պէտքին պատասխանելով՝ նաև Գահիրէի Հայ Երիտասարդներէն շատ համեստ թիւ մը, Վեր. 2. Խանդամուրի նախաձեռնութեամբ իր կազմակերպութեան սկիզբը թուագրեց 1912 Յունիս 2 Կիրակի օրը, ընդունելով 22 անդամներու կողմէն պատրաստուած և վաւերացուած կանոնագիր մը, որուն հիմնական մասերը կ'արտագրենք ստորեւ:



Ա. ԱՆՈՒՆ. — Ընկերակցութեան անունն է «Գահիրէի Հայ Երիտասարդաց Քրիստոնէական Ընկերակցութիւն»

Բ. ՆՊԱՏԱԿ. — Ընկերակցութեան նպատակն է երիտասարդը պատրաստել քրիստոնէական սկզբունքներու համաձայն, ֆիզիքապէս, մտաւորապէս և բարոյապէս, նկարագրի տէր տիպար մարդը ըլլալու:

Գ. ՈՒՂՂՈՒԹԻՒՆ. — Ընկերակցութեանս ուղղութիւնն է իր նպատակին իրագործումը հետապնդել՝ աւանց յարանուանական նկատուածներու, միայն քրիստոնէական անկեղծ սիրով տոգորուած:

Դ. ՄԻՋՈՑՆԵՐ. — Ընկերակցութիւնը իր նպատակին հասնելու համար, հաւատարիմ քնալով իր ուղղութեան, կրնայ զանազան միջոցներ դործածել, օգտակար ժամանցներ, պաշտներ, երեկոյթներ սարքել, ու բանախօսութիւններ, նուազահասոյթներ, բարոյական և հոգեւոր պաշտամունքներ ունենալ և ուրիշներ:

2 Յունիս 1912

Գահիրէ



## ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՌԱՏՈՅ

Հաւատամք 'ի մի Աստուած Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի, երեւելեաց և աներեւութից:

Եւ 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս յորդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ Միածին պայինքն՝ յէութենէ Հօր:

Աստուած յԱստուծոյ՝ լոյս 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ՝ եւ ոչ արարած:

Նոյն ինքն 'ի բնութենէ Հօր՝ որով ամենայն ինչ եղեւ յերկինս և 'ի վերայ երկրի, երեւելիք և աներեւոյթք:

Որ յազազս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան՝ իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ Հոգւովն Սրբով:

Որով էառ մարմին, հոգի և միտ, և զամենայն որ ինչ է 'ի մարդ. ճշմարտապէս և ո՛չ կարծեօք:

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ  
աւուր յարուցեալ, ելեալ 'ի յերկինս նովին  
մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր :

Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր,  
'ի դատել զկենդանիս և զմեռեալս :

Որոյ թագաւորութեանն ոչ քո վախճան :

Հաւատամք և 'ի Սուրբ Հոգին՝ յանեղ և  
ի կատարեալն :

Որ խօսեցաւ յՕրէնս և 'ի Մարգարէս և  
յԱւետարանս :

Որ էջն 'ի յորդանան, քարոզեաց զԱռա-  
քեալսն, և բնակեցաւ 'ի սուրբսն :

Հաւատամք և 'ի մի միայն Ընդհանրական  
և Առաքելական Սուրբ Եկեղեցի :

Ի մի Մկրտութիւն, յԱպաշխարութիւն,  
'ի քուսութիւն և 'ի թողութիւն մեղաց :

Ի Յարութիւն մեռելոց 'ի Դատաստանն  
յաւիտենից. Հոգւոց և մարմնոց. յԱրքայու-  
թիւն երկնից և 'ի Կեանսն յաւիտենականս :



11) Բ Ա Յ Լ Ե Ր Գ

Հ. Ե. Բ. ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹԵԱՆ



1. Օ՛ն, հայ պատանիներ,  
Հայ երիտասարդներ,  
Որ հայրենիք, հայրենիք, հայրենիք թողած  
Օտար ափանց վըրայ,  
Տարբեր երկիրներէն՝ [գատ:  
Բայց եղբայր ենք, եղբայր ենք, եղբայր ենք հարա-

(Խֆ.) Օտար անապատ,  
Այս հողին վրայ,  
Ովասիս մ'եկէք շինենք.  
Եւ մեր ստուերին տակ,  
Կազդոյր, սփոփ գտնեն

Հէք հայ սրտեր, հայ մտքեր, այո, հայ հողիներ :

2. Օ՛ն, եկէ՛ք միանանք  
Սիրոյ գրօշակին տակ .  
Եւ միաբան, միաբան, միաբան սրտով  
Յիսուս մեր օրինակ,  
Քրիստոս մեր զօրապետ,  
Եւ ծառայենք, ծառայենք, ծառայենք Տէրօջը :

Օտար անապատ : Եւ այլն :

ԱԿԻԻԼԻՆԷ

ՀՈԳԵԻՈՐ ԵՐԳԵՐ



ԱՌԱՒՕՏ ԼՈՒՍՈՅ



Առաւօտ լուսոյ,  
Արեգակն արգար,  
Առ իս լոյս ծագեա՛ :  
Բղխումն 'ի Հօրէ,  
Բղխեա՛ 'ի հոգւոյս,  
Բան քեզ 'ի հաճոյս :

Գանձդ ողորմութեան,  
Գանձիդ ծածկելոյ  
Գըտող զիս արա :  
Դուռն ողորմութեան,  
Դաւանողիս բա՛ց,  
Դասեցո՛ վերնոցն :

Երբեակ միութիւն,  
Եղելոց խնամող,  
Եւ ինձ ողորմեա՛ :



Զարթի՛ր Տէր, յօգնել,  
 Զարթո՛՛ զԹմրեալս,  
 Զուարթնոց նմանիլ:

Սէր անուն Յիսուս,  
 Սիրով քով ճրմլեան՝,  
 Սիրտ իմ քարեղէն:  
 Վասըն գըթութեան,  
 Վասն ողորմութեան,  
 Վերստին կեցո՛՛:

Տենչալւոյդ տեսլեամբ,  
 Տուր ինձ յագնալ  
 Տէ՛ր Յիսուս Քրիստոս:  
 Յօղ արեան քո Տէր,  
 Յօղեա՛՛ ՚ի հոգիս,  
 Յընծասցէ անձն իմ:

Փըրկիչ բոլորից,  
 Փռւթա զիս փըրկել  
 Փորձութեանց մեղաց:  
 Քաւի՛չ յանցանաց,  
 Քաւեա՛՛ զօրհնաբանս,  
 Քեզ երգել ըզփառս:

## ԵՐԳ ԻԻՂԱԲԵՐԻՅ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ



Եղիցի՛ անուն Տեառն օրհնեալ. ՚ի յայսմ  
 հետէ, մինչեւ ՚ի յաւիտեան:

Օրհնեցէ՛ք մանկունք զՏէր, և օրհնեցէ՛ք  
 զանուն Տեառն:

Եղիցի՛ անուն Տեառն օրհնեալ յայսմ հետէ  
 մինչեւ ՚ի յաւիտեան:

Յարեւելից մինչ ՚ի մուտն արեւու օրհնեալ  
 է անուն Տեառն. ՚ի յայսմ հետէ մինչեւ ՚ի  
 յաւիտեան:

Փա՛ռք և երկրպագութիւն Հօր և Որդւոյ  
 և Սրբոյ Հոգւոյն. եւ այժմ և միշտ և յաւիտեանս  
 յաւիտենից. Ամէն. Ի յայսմ հետէ մինչև  
 ՚ի յաւիտեան:

## 87) ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ, ԱԼԷԼՈՒԻՍ



1. Մենք հին մեծ երգէն բնաւ, երբէք ձանձ-  
 րոյթ չենք զգար,  
 Փառք ի բարձունս, Ալէլուիա:  
 Կ'երգենք աւ՛րի հօր հաւատքով մը խանդավառ  
 Փառք ի բարձունս, Ալէլուիա:

Օ՛ն, Տէրոջ ողայ+ ունին էրաւան+ Բարձր երգելա-  
 Դիւր դաւանայ պայծառ ճամբան,  
 Մէր հոգիներ ըն- կ'առնեն,  
 Տակա- կ'երթան+ Արտային ապարաններն հոյաշեն,  
 Փառ+ է Բարձրանս, Ալելուիա:

2. Արրչուանքով մենք սիրոյ գինովցած ենք  
 կենարար,

Փառք ի բարձունս Ալէլուիա:

Մենք իր թեւովն թռչինք սարերէն վեր ձիւ-  
 Փառք ի բարձունս Ալէլուիա: [նափառ,

Օ՛ն, Տէր-ջ ողայ+ ունին: Եւայլն:

3. Մենք կ'երթանք ահա հոյակապ պալատ  
 մ'ոսկեղէն,

Փառք ի բարձունս Ալէլուիա:

Ուր պիտ' տեսնենք թագաւորն իր վեհ փառաց  
 Փառք ի բարձունս Ալէլուիա: [մէջէն

Օ՛ն, Տէրոջ ողայ+ ունին: Եւայլն:

4. Հոն պիտ' գոչենք ուրախ սոր երգով սէրն  
 փրկարար

Փառք ի բարձունս, Ալէլուիա:

Հոն սրբոց հետ պիտ' երգենք փառք Փրկչին՝  
 խանդավառ

Փառք ի բարձունս, Ալէլուիա:

Օ՛ն, Տէրոջ ողայ+ ունին: Եւայլն:

122) ՕՐՆԵՑՅԷՔ ՏԵՐՐ ԾՆԾՂԱՅՈՎ



1. Եկէ՛ք պանծացնենք Տէրոջ անուն մէկտեղ,  
 Եկէ՛ք տարփողենք իր համբաւն հըզօր.  
 Ան մեզ ստեղծեր և պահեր ամէն օր,  
 Գովենք Ձայն սրտով ու ձայնով զօրեղ:

Տէրն շնծոյալ՝ Երհնէն+,  
 ՉԱստուած որոշով գովէն+,  
 Օրհնէն+ յՆա +աղցրաւոր +ընտրով,  
 Թող ընթանին հաշակէ, Բողբոն արջաբանից որոն,  
 Պանծացէ՛ք, Երբոց արբէ՛ք, ՂԱյն Երհնեցէ՛ք:


2. Եկէ՛ք, պանծացնենք Տէրոջ անուն մէկտեղ,  
 Որ յայտնեց մեզ իր փրկութիւնն համակ:  
 Իրենն՝ էր ձեռքը, և շընորհքը լծակ,  
 Որ յարոյց մեզ, մեռած՝ մեղքին ահեղ:

Տէրն Երհնէն+ շնծոյալ: Եւայլն:

3. Եկէ՛ք, պանծացնենք Տէրոջ անուն մէկտեղ  
 Փրկեալներն հռչակեն սէրն հրաշափառ,  
 Միացէ՛ք, սուրբ գունդեր, մեր ձայնին տըկար  
 Պանծացուցէ՛ք յաւէտ զԱստուած անեղ:

Տէրն Երհնէն+ շնծոյալ: Եւայլն:

Handwritten purple notes and markings, including the number 22866 and some illegible characters.



80)

## Ո Հ Ի Ն Ձ Տ Ր ՈՒ Է Ր



1. Ո՞ր, ինձ տրուէր հազար լեզու  
 Փրկչիս փառքն երգելու  
 Փրկչիս փառքն երգելու  
 Փառքն Աստուծոյս, թագաւորին  
 Յաղթանակն Իր շնորհքին  
 Յաղթանակն Իր շնորհքին  
 Յաղթանակն Իր շնորհքին
2. Ով իմ Աստուածս, Տէրս շնորհալի  
 Հաճէ օգնել ինձի,  
 Հաճէ օգնել ինձի,  
 Գովել, պատմել աշխարհ բոլոր,  
 Անուանըդ փառքն հրզոր,  
 Անուանըդ փառքն հրզոր,  
 Անուանըդ փառքն հրզոր:
3. Յիսո՛ւս անուն, հմայքի ծով է  
 Որ վախս իսկ կը թովէ,  
 Որ վախս իսկ կը թովէ,  
 Որ վշտերուս կը հրամայէ  
 Դադրիլ սիրտս ընկճելէ,  
 Դադրիլ սիրտս ընկճելէ,  
 Դադրիլ սիրտս ընկճելէ:

4. Մեղաւորին ականջներուն՝  
 Սուրբ երաժշտութիւն,  
 Սուրբ երաժշտութիւն,  
 Ժպիտ է, կեանք, առողջութիւն.  
 Խաղաղութիւն անգին,  
 Խաղաղութիւն անգին,  
 Խաղաղութիւն անգին:
5. Կը խորտակէ շղթան մեղքին.  
 Ազատ կընէ գերին,  
 Ազատ կընէ գերին.  
 Իր սուրբ արիւն մեռեալին՝ կեանք.  
 Եւ ինձ կ'ըլլայ փրկանք,  
 Եւ ինձ կ'ըլլայ փրկանք,  
 Եւ ինձ կ'ըլլայ փրկանք:

49)

## Ե Ր Բ Ա Մ Ե Ն Ք Ս Հ Ա Ս Ն Ի Ն Ք



1. Երգէ՛ Փրկչին սէրն հրաշալի,  
 Երգէ իր գութն ու շքնորհ.  
 Օրհնեալ յարկերուն տակ երկնի,  
 Պիտ՝ պատրաստէ մեզ մի տեղ:
- Երբ՝ ափնս . . . հասնիմ, Երկնս,  
 Ինչ սարսի ցնծո՞ւթեան Եր պիտ՝ ըլլայ:  
 Երբ՝ մեր Փրկ . . . շին քարնս,  
 Պիտ՝ երգենս խանդով յաղթանակ:

2. Մինչ իբր պանդուխտ կը ճամբորդենք,  
Երկիրնք ծածկեն թուխ ամպեր:  
Բայց երբ հայրենիք հասնինք մենք,  
Ոչ ամպ, արցունք, ոչ ստուեր:

Երբ «Ռն» ... հասնին: Եւայլն:

3. Օն, ծառայենք, ջանանք, գործենք,  
Հաւատարիմ և բարի,  
Պիտ՝ մոռցունէ բոլոր խոնջէնք  
Սոսկ իր շող մէկ նայուածքին:

Երբ «Ռն» ... հասնին: Եւայլն:

4. Օն, յառաջ, շեշտ մրցանակին,  
Որուն փայլն շուտ պիտ՝ տեսնենք,  
Շուտ զմրուխտ դռներ պիտ՝ բացուին,  
Ոսկի փողոցներն շրջինք:

Երբ «Ռն» ... հասնին: Եւայլն:

## Լ Ո Յ Ս, Ա Ր Ա Ր Ի Չ



Լոյս, արարիչ լուսոյ առաջին լոյս. բնակ-  
եալդ՝ ի լոյս յանմատոյց, Հայր երկնաւոր՝ ի  
գասուց լուսեղինացն օրհնեալ. ի ծագել լու-  
սոյ առաւօտուս, ծագեա՛ ի հոգիս մեր ըզլոյս  
քո իմանալի:

Լոյս ՚ի լուսոյ ծագումն արեգակն արգար.  
անճառ ծնունդ Հօր՝ Որդի. յառաջ քան զարև  
անուն քո գովեալ ընդ Հօր. ՚ի ծագել լուսոյ:

Լոյս, ՚ի Հօրէ Բղխումն աղբիւր բարու-  
թեան, Հոգի՛դ Սուրբ Աստուծոյ. մանկունք  
եկեղեցւոյ ընդ հրեշտակս ըզքեզ բարեբանեն.  
՚ի ծագել լուսոյ.

Լոյս, Երբեակ և Մի անբաժանելի սուրբ  
Երրորդութիւն. ըզքեզ ընդ երկնայնոցն երկ-  
րածինքըս միշտ փառաւորեմք, ՚ի ծագել լու-  
սոյ առաւօտուս ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս քո  
իմանալի:

Լոյս զուարթ սուրբ փառաց անմահի, Հօր  
երկնաւորի սրբոյ կենարարի Յիսուս Քրիստոս:

Եկեալքս ՚ի մտանել արեգականն, տեսաք  
զլոյս երեկոյիս: Օրհնեմք զՀայր և զՈրդի և  
զՍուրբ Հոգիդ Աստուծոյ: Եւ ամենքեան ա-  
սեմք. Ամէն: Արժանաւորեա՛ զմեզ յամենայն  
ժամ, օրհնել ձայնիւ երգով՝ զԱնուն փառաց  
Ամենասուրբ Երրորդութեանդ. Որ տայ ըզկեն-  
դանութիւն, վասն որոյ և աշխարհս զքեզ  
փառաւորէ:



92)

## ՅՈՐԳԱՀՈՍ ՍԷՐԸ



Ով Տէր, որ զիս Քեզ կը կարթես,  
Քեզ կը յանձնեմ նուազ հոգիս,  
Կեանքս ետ կուտամ, զոր Քեզ պարտիմ,  
Որ խորքին մէջ ծովուդ իր գեան՝  
Աւ՛լի ճօխ, յորդ ըլլայ:

Ո՛վ լոյս, որ հետեւիս ճամբուս,  
Առկայծ պատրոյգս Քեզ կը յանձնեմ,  
Սիրտս ետ դարձնէ իր գողգոջ շողն  
Որ ցոլքերուդ վառքովը իր այգն՝  
Աւ՛լի պայծառ ըլլայ:

Ով խինդ, զիս փնտռես ցաւիս մէջ,  
Ինչպէ՞ս սիրտս փակ պահեմ ժպտիդ,  
Ցողն ինձ ցոյց տայ վառ ծիածան,  
Եւ խոտտանայ թէ արշալոյս՝  
Պիտ՝ անարցունք ըլլայ:

Ով Խաչ, որ գլուխս վեր կ'ամբառնաս,  
Ես չեմ խնդրեր քեզմէ խոյս տալ:  
Կեանքիս մեռած փառքն կը թաղեմ,  
Հողէն կարմիր ծիլ տայ կեանք մը  
Որ անթառամ ըլլայ:

22) ԹՈՒԷ՛ ԹՐՀՆՈՒԹԻԻՆՆԵՐԻ



1. Երբ կեանքի ծովուն վըրայ փոթորկայոյց  
Խորհիս, այլևս թէ մարած է ամէն յոյս.  
Թուէ՛ մի առ մի քու մեծ օրհնութիւններն  
Որ ապշիս թէ ինչե՛ր ըրած է քեզ Տէրն:

Թուէ՛ մի առ մի օրհնութիւններն  
Որ տեսնես թէ ինչ ըրած է Տէրն,  
Մէկիկ մէկիկ յիշէ՛ բարիքներն.  
Որ ապշիս թէ ինչե՛ր ըրած է Քեզ Տէրն:

2. Բազմաչարչար հոգերու մէջ ծանրաբեռ՝  
Խաչի լուծը կըրելէն ես թէ ընկճեր.  
Թուէ՛ մի առ մի օրհնութիւններն բոլոր  
Որ կեանքդ ըլլայ երգ մը զըւարթ ամէն օր:

Թուէ՛ մի առ մի օրհնութիւններն: Եււ:

3. Երբ տեսնես մարդիկ սկզբոյ ճօխութեան մէջ.  
Խորհէ թէ Տէր կուտայ քեզ իր գանձն անշէջ  
Թուէ՛ մի առ մի օրհնութիւններն բոլոր,  
Ոսկին չի կրնար գընել վարձքդ երկնաւոր:

Թուէ՛ մի առ մի օրհնութիւններն: Եւն:

4. Մի վհատիր փորձութեանց մէջ մեծ, պղտիկ  
Երբ Տէր ամենուն վըրայ է ազդեցիկ:

Թուէ մի առ մի բարիքներն . հրեշտակներ  
Մինչև ճամբուդ վախճան քեզ չեն ըսպասեր :

Թուէ՛ մի առ մի օրհնութիւններն : Եւն :

### 76) Փ Ր Կ Ա Ր Ա Ր Շ Ն Ո Ր Հ Ք Ը

1. Ով չքնաղ օր , երբ լոյսն ցաթի ,  
Եւ երբ այգուն փառքերն բացուին ,  
Ան պիտ' դռներն բանայ սակի ,  
Որ իմ գիտէ անցած ուղին :  
Այս կեանք շուտ պիտ' գտնէ վախճան ,  
Նժգեհի երգս այ պիտ' դագրի :  
Սոսկ մընայ շնորհք տեւական ,  
Ո՛հ , միակ երգս յաւիտենի :

Եւ այն ատեն պիտի ճանչնամ ,  
Ինչպէս որ զիս ճանչցած է ան :  
Փրկչիս տեսնեմ դէմքն աննրման ,  
Երգս ընեմ շնորհքն անվախճան :

2. Կեանքի վերելք , նեղ մի ճամբայ ,  
Բայց չքնաղ երկիրն տանի վեր ,  
Ուր մեղք , գիշեր , ամպրոպ չկայ ,  
Այլ լոկ շնորհքով՝ փրկուածներ :  
Երգէ՛ , ով սիրաս , ճամբուն վըրայ ,  
Փրկարար շնորհք քեզ պիտ' հսկէ ,

Մինչ փառաւոր տիւ երեւնայ ,  
Եւ անցնիմ միւս եզր սակիէ :

Եւ այն ատեն պիտի ճանչնամ : Եւ ըն .

3. Աղօտ ատնեմ ճամբուս վախճան ,  
Բայց ո՛վ կ'ուզէ զիս , լաւ գիտեմ ,  
Եւ հետեւիմ Անոր անձայն ,  
Որուն սէրն կը լեցնէ եզեմ :  
Իր շունչն կզգամ շատ մօտ ինծի ,  
Այ վստահ եմ , արմաւենին  
Իր ձեռքերէն առնեմ պիտի ,  
Սոսկ փրկարար շնորհքովս Փրկչին :

Եւ այն ատեն պիտի ճանչնամ : Եւ ըն .

### 55) Շ Ն Ո Ր Հ Ք Ո Վ Մ Ի Ա Յ Ն

1. Աւետիս մ'անուշ հրեշտակի  
Թեւովս ինձ կը տրուի :  
Լո՛ւր հիասքանչ ու խնդաւէտ .  
Սիրաս կը թրթռայ յաւէտ :  
— Ահա թէ ինչու կ'երգեմ :
2. Փրկուած եմ շնորհքովս Քրիստոսի  
Շնորհքովս միայն ճրի :  
Անոր սիրոյն ծարաւն կ'զգամ ,

Ուխտաննա իր անուանն :

— Ահա թէ ինչո՛ւ կ'երգեմ :

3. Կը լըսեմ այս սիրոյ սուրբ լուր ,  
Երբ կը ծագի այգ լուռ :  
Կը կարգամ զայն արեւուն վրայ  
Որ վերն փայլի , ցոլայ :  
— Ահա թէ ինչո՛ւ կ'երգեմ :
4. Երբ ձայնն լըսեմ արշալոյսին ,  
Կամ երբ լոյսեր մարին .  
Շընո՞րհք , հըղօր ինչ կայ այլ բառ  
Որով հալի սիրտս սառ :  
— Ահա թէ ինչո՛ւ կ'երգեմ :
5. Հիասքանչ շնո՞րհք , որ ծովէ ծով ,  
Կը տարածուի մեզմով .  
Հէք սրտերուն լուռ , վշտազին  
Կուտայ լոյս , սէր , երկին :  
— Ահա թէ ինչո՛ւ կ'երգեմ :

109) ԻՐ ՇՆՈՐՀՔ ԲԱԼԱԿԱՆ Է ԻՆԾԻ



1. Իր շնորհք բաւական էր ինծի  
Երբ վախով ու դողով  
Փռւթացի ես իր քով ,  
Զիս սրբեց մեղքերէս ,

- (ԽՏՔ .)
- Մաքրեց սիրտս կրակի պէս ,  
Իր շնորհք բաւական էր ինծի :  
Ինծի , ինծի ,  
Իր շնորհք բաւական է ինծի :  
Ինծի , ինծի ,  
Իր շնորհք բաւական է ինծի :
2. Իր շնորհք բաւական է ինծի  
Ինչ ըլլայ իմ վիճակ ,  
Բաւ որ չեմ միայնակ ,  
Իր թեւերն ինձ կ'ըլլան  
Ապահով հանգրուան :  
Իր շնորհք բաւական է ինծի : Եւլն :
3. Իր շնորհք բաւական է ինծի ,  
Կը հոգայ պէտքերս ինք ,  
Քայլերս կ'ուղղէ երկինք ,  
Մահուան մէջ իսկ նըսեմ  
Իր շուքին տակ կ'երգեմ ,  
Իր շնորհք բաւական է ինծի : Եւն :
4. Իր շնորհք բաւական է ինծի ,  
Երկնից յարկերուն տակ ,  
Պիտ' երգեմ շարունակ ,  
Տէրօջս փառքին համար ,  
Յանկերգս այս ըլլայ յար .  
« Իր շնորհք բաւական է ինծի » : Եւն :





Եւ ստուերս մահու .

Զիա՛րդ պատսեցից ,

Զթիւ մեղաց իմոց ,

Զի բազում են յոյժ .

Տէր սղորմեա՛ . Տէր սղորմեա՛ . Տէր սղորմեա՛ :

Փռւթացի՛ր անձն իմ ,

Փախչիլ 'ի չարեաց ,

Փափաքիլ բարեաց :

Քեզ միշտ մերձ ծանիր

Քուն մահու եկեալ ,

Քլննող դատաւոր :

Տէր սղորմեա՛ . Տէր սղորմեա՛ . Տէր սղորմեա՛ :

## 140) ԿԱՐՈՂ ԱԶԱՏԵԼՈՒ ԲՈՒՈՐՈՎԻՆ



1. Ի՛նչ հիանալի փրկիչ մը գտած եմ  
 Իր ներկայութենէն հաճոյքներ յորդեն ,  
 Զիս ազատեց օրէնքէն  
 Իր սուրբ մահովը Խաչին  
 Ինք կարող է ազատել բոլորովին :

(Խճ .) Կարող է , կրնայ փրկել ,  
 Զի իր կեանք ձրրի տուաւ ,  
 Եկուր , ո՛հ , ե՛կ , ըշտապաւ  
 Որ մեղքերդ լուայ իրաւ .  
 Ինք կարող է ազատել բոլորովին :

2. Ուրիշ բան չեմ ուզեր ես իր սիրոյն քով  
 Իր անուան յարած են յոյսերս՝ ապահով ,  
 Խաչին փարիմ հաւատքով  
 Կ'երգեմ իր կարողութիւն ,  
 Ինք կարող է ազատել բոլորովին :

Կարող է , կրնայ փրկել : Եւայլն :

3. Լիութիւններովը իր շնորհքին փրկարար ,  
 Խոստացած է ցոյց տալ իր դէմք սուրբ ,  
 Օ՛ն , ալիքներ հոգմովար , [պայծառ ,  
 Շուրջս կուտակուին և յուզուին ,  
 Ինք կարող է ազատել բոլորովին :

Կարող է , կրնայ փրկել : Եւայլն :

4. Քեզ համար է այս փրկութիւն բաւարար  
 Իր ձրրի շնորհքն ընդունիլ չե՞ս բաղձար .  
 Ան գերդ մտերիմ եղբայր ,  
 Միշտ կը հսկէ քու կեանքին .  
 Ինք կարող է ազատել բոլորովին :

Կարող է , կրնայ փրկել : Եւայլն :

## 5) ՈՅԺ ԱՐԵԱՆ ՄԷՉ



Կ'ուզե՞ս ազատ ըլլալ մեղքի բեռէն,  
Ոյժ կայ արեան մէջ, ոյժ արեան մէջ:  
Կ'ուզե՞ս չարին վրայ յաղթանակ տանել.  
Հիասքանչ ոյժ կայ արեան մէջ:

Կայ հըշբ ոյժ, հրաշագործ ձե՞ծ ոյժ,  
Գառնակէն արեան մէջ:  
Կայ հըշբ ոյժ, հրաշագործ ձե՞ծ ոյժ  
Գառնակէն արեան մէջ աշխիւն:

Կ'ուզե՞ս ազատ ըլլալ բուռն կիրքերէդ  
Ոյժ կայ արեան մէջ, ոյժ արեան մէջ  
Ե՛կ Գողգոթա, սրբագործ աղբիւրին  
Հիասքանչ ոյժ կայ արեան մէջ:

Կայ հըբ ոյժ: Եւայլն:

Կ'ուզե՞ս աւ՛լի ճերմակ ըլլալ ձիւնէն  
Ոյժ կայ արեան մէջ, ոյժ արեան մէջ:  
Մեղքերդ կը ջնջուին իր աւբին մէջ,  
Հիասքանչ ոյժ կայ արեան մէջ:

Կայ հըբ ոյժ: Եւայլն:

## 1) ՁԻՍ ՊԻՆԴ ԿԸ ԲՈՆԷ (\*)



1. Երբ կը զգամ հաւատքս տկար  
Տէրս զիս կը բռնէ,  
Երբ վրաս տիրէ փորձիչ չար,  
Ան զիս կը բռնէ:

(ԽճԲ.)            Ձիս պինդ կը բռնէ,  
                          Ձիս պինդ կը բռնէ,  
                          Մինչ Տէրս զիս շատ կը սիրէ,  
                          Ձիս պինդ կը բռնէ:

2. Մինչ թանգ եմ ես իր աչքին,  
                          Ձիս պինդ կը բռնէ.  
Փրկածներն՝ իր բերկրութիւն՝  
                          Ձիս պինդ կը բռնէ:

                          Ձիս պինդ կը բռնէ: Եւլն:

3. Ինքզինքս բռնել չեմ կրնար,  
                          Ինք պէտք է բռնէ.  
Սէրս է յաճախ զերդ պաղ սառ,  
                          Ինք պէտք է բռնէ:

                          Ձիս պինդ կը բռնէ: Եւլն:

(\*) Alexander'sի Չրդ հատորին մէջ:

4. Հոգևոյս կորուստն թոյլ չտար,  
 Զիս պինդ կը բռնէ:  
 Գնուած արեամբ փրկարար,  
 Զիս պինդ կը բռնէ:

Զիս պինդ կը բռնէ: Եւ լն՝.

121) ԳԻՏԵՄ ՈՐ ԻՄՍ Է ԱՆ



1. Կայ գեր ի վեր Մէկն ամենէն.  
 Իր սէրն կը գլէ սէրերն ամէն.  
 Իմ Տէրս է Ան, Յիսուս աննաման,  
 Իմ Տէրս, գիտեմ, թէ իմս է ան:

(Խֆ.) Գիտեմ իմս է, սերտ բարեկամ,  
 Իմ մէջս կ'ապրի, միշտ մօտ ինձի:  
 Բիւր հրապոյրներ շուրջն իր փալփլան:  
 Բայց էն չքնաղն՝ թէ իմս է Ան:

2. Իմս է, քանզի իմ տեղս մեռաւ,  
 Հոգիս փրկեց մեղսագըրաւ.  
 Ես ծնրազիր կուտամ անուան  
 Փառք, զի գիտեմ թէ իմս է Ան:

Գիտեմ իմս է: Եւ այլն:

3. Իմս է Յիսուս, մինչ սրտիս մէջ  
 Իր սէրն ու ինք կ'ապրին անշէջ,  
 Որթի ճիւղին պէս անբաժան  
 Կապուած, գիտեմ թէ իմս է Ան:

Գիտեմ իմս է: Եւ այլն:

4. Օր մ'երբ աչքերս իր փառք տեսնեն,  
 Եւ գիրգ թեւերն զիս պինդ գրկեն.  
 Ուրախ վանկով պիտ' բարձրաձայն  
 Գոչեմ. « Գիտեմ թէ իմս է Ան »:

Գիտեմ իմս է: Եւ այլն:

106) ԻՄ ՀԱՅՐՍ ԳԻՏԷ



1. Գիտեմ թէ իմ հայրս գիտէ լաւ,  
 Մորիկներն որք կ'աւրեն ճամբան,  
 Եւ կը ցրուէ ամպերն սրարչաւ,  
 Գիշերս ալ դարձնէ ջինջ օրուան.  
 Գիշերս ալ դարձնէ ջինջ օրուան:

(Խֆ.) Գիտէ... գիտէ...  
 Մորիկներն որք կ'աւրեն ճամբան:  
 Գիտէ... գիտէ...:  
 Կը վարէ հովերն կատաղի:

2. Գիտեմ թէ իմ Հայրս գիտէ լաւ  
 Գեղն՝ որով լաւն իմ ցաւեր :  
 Իր սիրոյ հպումովն գիւրաւ  
 Կը բուժէ հոգիս կարեւրեր :  
 Կը բուժէ հոգիս կարեւրեր :

Գիտէ... գիտէ... : Եւլն :

3. Գիտեմ թէ իմ Հայրս գիտէ լաւ,  
 Թէ անզօր եմ թշնամուոյս դէմ,  
 Կը պաշտպանէ բայց դատս իրաւ,  
 Եւ կը պահէ զիս միշտ, գիտեմ :  
 Եւ կը պահ զիս, միշտ գիտեմ :

Գիտէ... գիտէ... : Եւլն

126) ՊԻՏ՝ ՃԱՆՉՆԱՄ ՁԻՆՔ



1. Երբ վերջ գտնեն կեանքիս գործեր և անց՝  
 նիմ յորդ ալիքէն :  
 Երբոր տեսնեմ վարդ արշալոյս լուսաշող .  
 Պիտ՝ ճանչնամ Փրկիչս՝ երբոր հասնիմ միւս ե՛ր  
 գերքն արդէն :  
 Եւ իր ժպիտն՝ առաջին զիս ողջունող :

(Խճ.) Պիտ՝ ճանչնամ Ձինք, պիտ՝ ճանչնամ Ձինք :  
 Երբ Իր քովն կայնիմ, զերծ՝ մեղքերէն :

Պիտ՝ ճանչնամ Ձինք, պիտ՝ ճանչնամ Ձինք .  
 Իր ձեռաց գամերուն նշանէն :

2. Ո՛հ, հոգեցունց հըմայք երբ իր տեսնեմ օրհ-  
 նեալ դէմքն աղւոր ,  
 Եւ անուշ ցոլքն իր շողարձակ աչքերուն ,  
 Գերարբշիւ սիրտս պիտ՝ օրհնէ իր գըթութիւն  
 սէր , շընորհ ,  
 Որ երկինքը կը պատրաստէ ինձ նոր տուն :

Պիտ՝ ճանչնամ զինք : Եւայլն :

3. Ինձ փութալու նըշան կ'ընեն սիրելիք փառ-  
 քի մէջէն ,  
 Ո՛հ, կը յիշեմ մեր բաժանում մութ գետէն .  
 Դէպ հեշտ ձորեր Եդեմի բարի գալուստ ինձ  
 կ'երգեն ,  
 Բայց նախ, Փրկիչս տեսնել կ'ըղձամ քան զամէն :

Պիտ՝ ճանչնամ Ձինք : Եւայլն :

4. Ան՝ ըսպիտակ պատմուճանով ոսկի դռներէն  
 քաղքին ,  
 Ձիս պիտ՝ տանի ուր արցունք չեն հոսեր ա՛լ .  
 Դարերու զուարթ երգին պիտ՝ միանամ խըն-  
 դագին ,  
 Բայց նախ կ'անձկամ տեսնել Փրկիչս սիրահալ :

Պիտ՝ ճանչնամ Ձինք : Եւայլն :

## ԵՐԳ Ս. ԾՆՆԴԵԱՆ

:::

Խորհուրդ մեծ և սքանչելի որ յայսմ առուր յայտնեցաւ. Հովիւք երգեն ընդ հրեշտակս տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի, որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ: Անբաւելին երկնի և երկրի ի խանձարուրս պատեցաւ. ոչ մեկնելով ի Հօրէ ի սուրբ այրին բազմեցաւ:

Այսօր ցնծան երկինք ի վերուստ մեծապայծառ աւետեօք. Եւ արարածք ամենայն զգեցան հանդերձ փրկութեան:

Այսօր յայրին ընծայեցաւ Քրիստոս Որդին Աստուծոյ: Եւ հրեղինաց բազմութիւնքն յերկնից յերկիր վայր իջեալ:

Այսօր հովուացըն տեսեալ զԱրդարութեան Արեգակն. Եւ ընդ հրեշտակս երգէին «Փառք ի բարձունս Աստուծոյ»:

Ի Հօրէ ծագեցար լուսաւորել զարարածս. Արդարութեան Արեգակն, Տէր, փառք Քեզ:

Ծընար ի յայրին ընծայեցաւ Բեթղեհէմ, Արդարութեան Արեգակն, Տէր, փառք քեզ:

Հովուացն յայտնեցար երկրպագեալդ ի մոզսց, Արդարութեան Եւն:

Եւ մեք երգեսցուք որ ի կուսէն մարմնացար, Արդարութեան Եւն:



## ՓԱ՛ՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ

:::

Փա՛ռք ՚ի բարձունս Աստուծոյ. և յերկիր խաղաղութիւն ՚ի մարդիկ հաճութիւն:

Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս, օրհնեալ ես Տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ:

Խոստովանիմք Տէր զքեզ և երկիրպագանեմք քեզ. փառաւորեմք զքեզ. գոհանամք Տէ՛ր զքէն, վասն մեծի փառաց քոց:

Տէ՛ր թագաւոր Սուրբդ երկնային, Աստուած և Հայր ամենակալ:

Տէր և Որդի Հօր Միածին Յիսուս Քրիստոս և Սուրբ Որդի:

Տէր Աստուած Գառն Աստուծոյ և Որդի Հօր. որ առեր զմերս ՚ի կուսէն:

Ողորմեցար, բարձեր զմեզս աշխարհի. և արդ ընկա՛լ զաղաչանս մեր:

Սուրբդ որ նստիս ընդ աջմէ Հօր՝ ողորմեա՛ց մեզ:

Ձի դու միա՛յն սուրբ, դու միա՛յն բարձրեալ ես, դու միա՛յն Տէր մեր Յիսուս Քրիստոս:

Տէ՛ր և Հոգիդ Սուրբ՝ որ ի փառս Աստուած ընդ Հօր. Ամէն:



## ԵՐԳ ԾՆՆԴԵԱՆ ՓՐԿՉԻՆ (\*)

\*\*\*

Ծափ զարկ, աշխարհ, ցնծա՛ այսօր,  
 Յնծա՛ եւ յաւիտեան,  
 Քանզի ծնաւ Արքայն հօր,  
 Իշխան խաղաղութեան:

Ե՛լ, ո՛վ Երկիր, ահա կուգայ  
 Ազգաց յոյժ ցանկալին,  
 Տուէք, արեւ ու լուսնկայ,  
 Ողջոյն էմմանուէլին:

Թող Սիօնի որդիք բերկրին,  
 Հնչեն փող յօրելեան,  
 Օծեալ անմահ թագաւորին  
 Երգեն երգ գովութեան:

Թող Յորդանան, ափեր իւր զով  
 Կազմեն պար ու թափօր.  
 Եւ Գալիլիան գոռայ պերճ ծով,  
 Խայտան Հերմոն, թափօր:

Ե՛լ Յուդայի վհատ աղջիկ,  
 Ծաղկած են դաշտ, արօտ,  
 Գլխուդ պըսակ վարդէ փնջիկ  
 Ճակտիդ կապէ նարօտ:

(\*) Joy to the World (Sacred Songs and Solos, 664)

Ո՛հ, Սարօնի փթթի Ծաղիկ,  
 Հովտաց անբիծ Շուշան,  
 Բեթլեհեմի փայլուն Աստղիկ,  
 Շողայ նորանշան:

Քեզ աւետիս, Սելով եկաւ  
 Հռչակէ Տէր զնա.  
 Քնար, շեփօր ու գոռ թմբկաւ,  
 Գոչէ միշտ Ովսաննա:

ԹՐԳՄ. Ա. ՊԵՏԻԿԵԱՆ

## 29) ՏԵՂ ՄԸ ՉՈՒՆԻՐՍ ՅԻՍՈՒՍԻ

■

1. Սերտդ տանջուած է հոգերով,  
 Տեղ մը չունի՞ս Յիսուսի,  
 Գրաւուած փառքով հոգեթով.  
 Տեղ մը չունի՞ս Յիսուսի:  
 Ահա կայնած դրանդ առջին,  
 Կը զարնէ կրկին կրկին,  
 Լսէ՛ ձայնն կողկողազին.  
 Տեղ մը չունի՞ս Յիսուսի:

(ԽճԷ.)

Տեղ մը չունի՞ս Յիսուսի,  
 Տեղ մը չունի՞ս Յիսուսի.  
 Լսէ ձայնն կողկողազին,  
 Տեղ մը չունի՞ս Յիսուսի:

2. Զուր վատնած ժամերդ անգին,  
 Չես գործե՞ր վասն Յիսուսի,  
 Եւ սպառած ուժերդ՝ սին,  
 Չես գործե՞ր վասն Յիսուսի:  
 Չես ջանար յաղթել մեղքին,  
 Չես փնտուեր կորսուած հոգին.  
 Չես օգներ մոլորեալին,  
 Չես գործե՞ր վասն Յիսուսի:

Տեղ մը չունի՞ս Յիսուսի: Եւլն.

3. Սոսկ տերեւով չոր՝ գո՞հ ես,  
 Պըտուղ չունի՞ս Յիսուսին.  
 Ոչ ձեռքդ հասկեր սսկեգէս,  
 Պըտուղ չունի՞ս Յիսուսին:  
 Ոչ մէկ հատիկ ցորենի,  
 Ոչինչ վարձքի արժանի,  
 Սիրտդ՝ ոչ սիրոյ յոյս ունի:  
 Երբ երեւնաս Յիսուսի:

Տեղ մը չունի՞ս Յիսուսի: Եւլն.

## 31) ԱՄԷՆ ԲԱՆ ԿԸ ԶՈՂԵՄ

⋮⋮⋮

1. Ամէն բան կը զօհեմ Փրկչիս,  
 Ամէն ինչ կուտամ յօժար,  
 Իր սիրոյն յանձնեմ պիտ՝ հոգիս,  
 Պիտ՝ սիրեմ, պաշտեմ Զինք յար:

Կը դահե՞ Քեղէ: Կը դահե՞ Քեղէ  
 Ես՝ մէն քան, օրհնեալ Փրկչիւ  
 Կը դահե՞ Քեղէ:

2. Ամէն բան կը զօհեմ Փրկչիս,  
 Իր ստքն կ'իյնամ ծնրադիր,  
 Հիմա Յիսուս, Սիրովդ ա՛ռ զիս.  
 Սին հաճոյքներս եմ լըքեր:

Կը դահե՞ մէն: Եւայլն:

3. Ամէն բան կը զօհեմ Փրկչիս,  
 Քուկդ ըրէ զիս, քուկդ համակ,  
 Սուրբ հոգիդ վկայէ սրտիս  
 Թէ ես քուկդ եմ, և Դուն իմա:

Կը դահե՞ մէն: Եւայլն:

4. Ամէն բան կը զօհեմ Փրկչիս ,  
Սիրտս կը վառի սուրբ բոցով .  
Փրկութեան հրճուանքն , աւետիս ,  
Կը յորդէ սիրտս , փառք Անոր :

Կը շահեմ - զն : Եւայն :

### 15) Փ Ր Կ Ի Չ Ն Ի Մ Հ Ե Տ Ս



1. Պէտք է Փրկիչս հետըս առնեմ ,  
Չեմ կրնար քաշել յինակ .  
Պէտք է իմ մօտս իր շունչն զգամ ,  
Եւ թեւովն զիս բահուանդած :

(Խօք .) Յայնժամ հոգիս չի վախնար ,  
Ուր որ կ'ուզէ զիս տանի :  
Ես կ'երթամ առանց արտունջի ,  
Իր հետքերէն կը քաշեմ յար :

2. Պէտք է Փրկիչս հետըս առնեմ  
Զերմ հաւատքս միակ է տկար  
Կը փսփոսայ յուսոյ բառեր ,  
Զորս ուրիշ ձայն չկրնար :

Յայնժամ հոգիս չի վախնար : Եւլն :

3. Պէտք է Փրկիչս հետըս առնեմ ,  
Կեանքի ճամբուն մէջ դժուար .  
Թէ լոյս պայծառ , թէ մութ խաւար ,  
Թէ կռիւ ըլլայ պայքար :

Յայնժամ հոգիս չի վախնար : Եւլն :

4. Պէտք է Փրկիչս հետըս առնեմ ,  
Իր աչքն ուղեցոյց՝ ճամբուն ,  
Մինչ հասնիմ ձորն Յորդանանու ,  
Մինչ անցնիմ հոսանք փրփուն .

Յայնժամ հոգիս չը վախնար :

### 14) Ա Մ Է Ն Տ Ե Ղ Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Հ Ե Տ



1. Ամէն տեղ կ'երթամ Փրկչիս հետ ապահով ,  
Ամէն տեղ երբ կ'ըլլայ առաջնորդ ինձի :  
Ամէն տեղ առանց Անոր՝ կեանք չող չունի ,  
Ամէն տեղ ես վախ չեմ զգար Փրկչիս քով :

Ա՛նն որչ , ա՛նն որչ , վախ՛աւ չե՛մ գիտեր ,  
Ա՛նն որչ կ'երթամ Փրկչիս հետ ապահով :

2. Ամէն տեղ Փրկչիս հետ մինակ չեմ զգար ,  
Ուրիշներ թէ զիս լքեն , միշտ իմս է Ան .



Թէ վախուտ, երկար, մռայլ ըլլայ ճամբան,  
Փրկչիս հետ՝ ամէն տեղ օրհնեալ սուրբ տաճար:

Ա.Քն. Դեղ, Կ.Քն. Դեղ: Եւայլն:

Ամէն տեղ Փրկչիս հետ կը ննջեմ յուշիկ,  
Երբ մըռայլ ստուերներ շուրջն իմ սողոսկին.  
Երբ արթննամ պանդուխտ օրերս պիտ' դադրին:  
Ամէն տեղ Փրկչիս հետ կ'ըլլայ հայրենիք:

Ա.Քն. Դեղ, Կ.Քն. Դեղ: Եւայլն:

## 57) ԻՆՉ ԱՆՈՒՇ Է ԻՐ ՍԷՐ



1. Երբ տառապած հոգիս հանգիստ կը փնտռէ  
Ի՞նչ անուշ է սէր Յիսուսի.

Երբ առանձին եմ, բարեկամք դաժան, խիստ  
Ի՞նչ անուշ իր սէրն ինձի:

(Խճ.) Ո՛հ, անուշ, ինչ անուշ է իր սէր  
Ի՞նչ անուշ իր սէրն ինձի.

Երբ զիս մինակ՝ լքած են սիրելիներ  
Ի՞նչ անուշ իր սէրն ինձի:

2. Երբ անյուսուլթեան մէջ իյնամ նուազկոտ,  
Ի՞նչ անուշ է սէրն Յիսուսի.

Երբոր կրեմ վիշտ, տանջանք և դառն ամօթ,  
Ի՞նչ անուշ իր սէրն ինձի:

Ո՛հ, անուշ, ինչ անուշ է իր սէր: Եւայլն:

3. Երբ մութ է գիշեր, և սիրտըս խաւար սեւ  
Ի՞նչ անուշ է սէր Յիսուսի.

Երբ հանգստեան կարօտ զգամ հեւ ի հեւ,  
Ինչ անուշ իր սէրն ինձի:

Ո՛հ, անուշ, ինչ անուշ է իր սէր: Եւլն:

4. Մահուան ձորէն անցած ատենս պիտ' երգեմ  
«Ի՞նչ անուշ է սէրն Յիսուսի»

Զիս կ'առաջնորդէ ապահով սուրբ Եգեմ,  
Ի՞նչ անուշ իր սէրն ինձի:

Ո՛հ, անուշ, ինչ անուշ է իր սէր: Եւլն:

## Տ Ա Ր Ա Ծ Ե Ա Լ



Տարածեալ ձեռք ընդ ձեռաց  
Ոտք ընդ ոտից ընթանալեաց.  
Փայտ ընդ փայտի դառն պըտղոյ  
Կեանք ընդ մահու փոխարկելով.  
Ի մէջ երկուց անօրինաց  
Կայր մերկացեալ տուողն օրինաց  
Զոր ոչ տեսին ազգըն կուրաց  
Բայց ՚ի միոյն յաւազակաց:

Բոպէից արեգականն  
 Ըզախեն արար գիշերանման .  
 Զըստուերըն քօղ արկ մերկութեան  
 Զի մի տեսցէ ակն անարժան .  
 Ի միջօրեայն նըսեմացաւ  
 Յորժամ Ագամ մեղօք մեռաւ .  
 Ի յիններորդն 'ի լոյս դարձաւ  
 Յորժամ մահուամբ մահըն լուծաւ :

Քարոզի 'ի սքանչելեացս  
 Աստուած մարմնով վասն իմ խաչեալ  
 Մերով բնութեամբըս մեռանի  
 Աստուած անմահ խոստովանի .  
 Կըրկնավըտակ կողին աղբերբք  
 Եկեղեցի իւր հաստատի ,  
 Զրովըն մաքրի զԱրիւնն ըմպէ  
 ԶՈրդի ընդ Հօր փառաւորէ :

62) Ա.ՅՐՆ ԳՈՂԳՈԹԱՅԻ



1. Էն գեղանին երկրիս վրայ  
 Էն սիրազեղն ու սիրտհմայ ,  
 Քու մէջդ տեսնեմ Աստուածութիւն  
 Գեղեցիկ այր Գողգոթային :

(ԽՖ.) Գողգոթայի վրայ մեռնող այր  
 Սրբեց իմ սիրտս և փրկեց զիս .  
 Մեզքն ա՛լ վրաս տիրել չկրնար ,  
 Մինչ տէրս մեռաւ ինձի համար :

2. Դառն ու լեզի խմեց բաժակ ,  
 Խաչեալն Յիսուս , ո՞հ , վայրահակ ,  
 Կրեց մեր մեղքն , վիշտ տրտմագին ,  
 Վշտալից Այր Գողգոթային :

Գողգոթայի վրայ մեռնող : Եււն :

3. Կեանք շնորհեց մեղաւորին ,  
 Գերիներուն ազատութիւն ,  
 Փրկանք տուաւ մեզ իր արիւն .  
 Գթառատ Այր Գողգոթային :

Գողգոթայի վրայ մեռնող : Եււն :

4. Օր մ'յաւիտեան միացած Քեզ ,  
 Պիտի բաժնենք սէրդ սրտակէզ ,  
 Յաւէտ Քեզ հետ հոն խնդագին :  
 Պանծալի Այր Գողգոթային :

Գողգոթայի վրայ մեռնող : Եււն .

## ԹԻՆԻ ՁԵՐ ՄԵՂՔԵՐ ԿԱՐՄԻՐ (\*)

⋮

Թէեւ ձեր մեղքեր կարմիր  
 Ձիւնի պէս պիտ' ճերմկնան,  
 Թէ որդան կարմիրի պէս,  
 Պիտի բլան իբր' ասըր:  
 Թէեւ ձեր մեղքեր կարմիր  
 Ձեր մեղքեր կարմիր,  
 Ձիւնի պէս պիտ' ճերմկնան  
 Ձիւնի պէս պիտ' ճերմկնան  
 Թէեւ ձեր մեղքեր, կարմիր  
 Ձիւնի պէս պիտ' ճերմկնան:

Լսեցէ՛ք ձայնն կաղաչէ,  
 Ո՛հ շուտ, Աստուծոյ դարձէք.  
 Ան ի՞նչ մեծ սէր կարեկիր,  
 Եւ գութ, գորովանք ունի:  
 Լսէ՛ ձայնն որ կ'աղաչէ  
 Ձայնն որ կ'աղաչէ.  
 Ոհ, շուտ Աստուծոյ դարձէք  
 Ոհ, շուտ Աստուծոյ դարձէք  
 Լսէ՛ ձայնն որ կ'աղաչէ,  
 Ոհ, շուտ Աստուծոյ դարձէք:

(\*) *Though your sins...* (Sacred Songs and Solos, 522)

Կը ներէ ձեր յանցանքներն,  
 Այլեւս չի յիշեր զանոնք  
 Ինձ նայեցէ՛ք, ով մարդիկ,  
 Կ'ըսէ ձեր Աստուածն հըզօր.  
 Կը ներէ ձեր յանցանքներն  
 Ներէ յանցանքներն,  
 Այլեւս չի յիշեր զանոնք.  
 Այլեւս չի յիշեր զանոնք,  
 Կը ներէ ձեր յանցանքներն.  
 Այլեւս չի յիշեր զանոնք:

## 24) Մ Ա Ք Ո Ւ Ր Ս Ի Ր Տ

⋮

1. Մէկ բան կը խնդրեմ Տէրօջմէ,  
 Մինչ կեանքս համակ գարչ եղած է,  
 Ըլլայ ջուրով կամ կրակով հուր,  
 Ո՛հ, զիս ըրէ՛, ըրէ՛ մաքուր:
- (ԽճՔ.) Այսպէս ներսէն, դուրսէն լուս',  
 Մաքրէ կրակով թէ պէտք ըլլայ,  
 Ինչ փո՞յթ, ինչպէ՛ս՝ բաւ ինձ համար,  
 Որ մեղքն իմ մէջս մեռնի իսպառ:
2. Թէ նոր տեսիլք, ինձ հաղորդես,  
 Քեզ փա՛ռք կուտամ բոլոր սրտէս,

Բայց աւ'լի սուրբ սիրտ մ'ինձ համար,  
Կարժէ աշխարհ, երկինք հազար:

Այսպէս ներսէն, դուրսէն լուա': Եւլն.

3. Երբ սիրտս մաքուր, ինձ կը դառնան  
Տեսիլքներն մեծ, լայն, աննըման:  
Իր խորքին մէջ ջրնջ հայելի.  
Ուր փրկչիս լոյս գէմք կը գծուի:

Այսպէս ներսէն, դուրսէն լուա': Եւլն.

## 2) ԶԻՍ ՍՈՒՐԲ ՊԱՀԷ



1. Օրհնեալ Յիսուս իմս ես դուն,  
Ինչ որ ունիմ, քուկդ ամէն,  
Սիրտդ սրտիս մէջ գտնէ տուն,  
Ամէն կողմ մաքրէ մեզքէն:

(Խճ.) Ով Յիսուս, զիս սուրբ պահէ,  
Պահէ քայլերս լուսոյ մէջ.  
Ինչ որ եմ, ունիմ քուկդ է,  
Օրհնեալ Յիսուս իմս ես դուն:

2. Գրկիդ մէջ եմ տպահով,  
Հոգերս ամէն ձգած քեզ,

Քաղցր անդորր կզգամ քու քով,  
Մինչ կուրծքիդ վրայ եմ յենած:

Ով Յիսուս, զիս սուրբ պահէ: Եւլն.

3. Անգին Յիսուս, օրէ օր,  
Զիս պահէ սուրբ ճամբուն մէջ,  
Միաքս վայլէ հաստատ անդորր,  
Հաւատքս աճի միշտ անչէջ:

Ով Յիսուս, զիս սուրբ պահէ: Եւլն.

## ՆՈՐԱՍՏԵՂԵՍԼ



Նորաստեղծեալ Բանն յանէից  
Ի սկզբանէ զերկինս երկնից.  
Եւ զերկնային զօրս անմարմնոց  
Իմանալեացըն զըւարթնոց.  
Եւ զգալի տարերց քառից  
Հակառակաց միաբանից.  
Որով յաւէտ փառաբանի,  
Երբորդութիւնն անճառելի:

Երեքսրբեան Մի Տէրութիւն  
Միով բնութեամբ Աստուածութիւն  
Լոյսն որ անեղ արարչական՝

Ասաց լինի լոյս եղական .  
 Զոր և ծագեաց յօրն Առաջին  
 Միաշարաթ կիւրակէին : — Որով :

Բարունորէն բացատրեսցուք  
 Զծածկեալ խորհուրդն ծանկցուք .  
 Զի լոյսն անտես իմանալի  
 Մաքուր հոգւոց տեսանելի ,  
 Ի սոյն ծագեաց միաշարաթ  
 Մեզ յարութեան սուրբ ճառագայթ .  
 Եկայք փրկեալք ընդ Զուարթնոյն  
 Տո՛ւք օրհնութիւն Յարուցելոյն :

Սէրըդ սիրով խոնարհեցար ,  
 Ի փրկութիւն մեր մարմնացար ,  
 Նովին մարմնովըն խաչեցար  
 Ի գերեզման մահու եգար .  
 Այսօր Յարեար աստուածարար  
 Ի հրեշտակաց քարոզեցար . — Եկայք .

Երեւեցար խընկաբերիցն  
 Յոգջոյն կենաց ուրախալից .  
 Եւ 'ի լերինըն Գալիլիա  
 Առաքելոց մետասանից .  
 Արժանացո՛ղմեզ ընդ նոսին՝  
 Զքեզ տեսանել յօրըն վերջին . — Եկայք .

Սիօնի սրգիք զարթի՛ք  
 Հարսին լուսոյ տո՛ւք աւետիք

Եթէ փեսայն քօ յարուցեալ  
 Յաղթեաց մահու իշխանութեամբ .  
 Գայ պսակէ ըզքեզ փառօք  
 Ե՛լ ընդ առաջ պճնեալ զարգուք .  
 Երգեա՛ երգ նոր Յարուցելոյն ,  
 Ննջեցելոց կենաց պըտոյն :

### 99) ԶԻՆՈՒՈՐԻՆ ԵՐԳԸ

\*\*\*

1. Օն , արի՛ք , տղայք փրկութեան ,  
 Միացէք Զօրագլխին .  
 Ե՛լ , արթնցիր , ով հզօր ազգ ,  
 Սիօն՝ չեկած թշնամին :

(Խճ .) Յորդէ հզօր , երգ մը վըսեմ ,  
 Յորդէ հզօր , երգ մը վըսեմ ,  
 Թունգ որստման պէս ծովուն ,  
 Մեր փրկանք-Քրիստոսի արեամբ  
 Քան զաշխարհակալ մեծ ենք :  
 Քան զաշխարհակալ մեծ ենք .  
 Մեր փրկանք-Քրիստոսի արեամբ՝  
 Քան զաշխարհակալ մեծ ենք :

2. Մեզմէ առաջ սուրբ հերոսներ  
 Այս սուրբ ուխտին զօհուեցան .  
 Կը ծածանի իրենց զրօշակ  
 Փրկչին արեամբ յաղթական :

Յորդէ հզօր, երգ մը վսեմ: Եւլն:

3. Անմահներ ենք, մենք վախ չունինք,  
Կեանք կայ պահուած Տէրօջ քով:  
Իր յայտնուածին պայծառ առտուն,  
Պիտ' յորդէ փառքի մի ծով:

Յորդէ' հզօր, երգ մը վսեմ: Եւայլն:

### ԶԻՆՈՒՈՐԻՆ ԵՐԳԸ (\*)



1. Օ՛ն, Փրկչին զինուորներ,  
Օ՛ն, յառաջ ի մարտ,  
Խաչանիչ դրօշը ձեր  
Թող ծածանի յազթ:  
Քրիստոս մեր Տէր Արքան  
Առաջնորդն է մեր,  
Օ՛ն, կըրուինք յազթական,  
Բռնենք դրօշն ի վեր:

(ԽճԷ.) Օ՛ն, Փրկչին զինուորներ,  
Օ՛ն, յառաջ ի մարտ,  
Խաչանիչ դրօշը ձեր  
Թող ծածանի յազթ:

(\*) O'ward Christian Soldier's (Sacred Songs and Solos, 611)

2. Տէրօջ Եկեղեցին  
Շարժի զերթ բանակ,  
Մեզ ալ պահուած է հին  
Սըրբոց յազթանակ:  
Մընանք միշտ անբաժան  
Մէկ սիրա մէկ հոգի,  
Սիրով եղբայրութեան  
Յոյսովը հաւատքի:

Օ՛ն, Փրկչին զինուորներ: Եւայլն:

3. Գահեր կը կործանին  
Ու պետութիւններ,  
Տէրօջ Եկեղեցին  
Կը մնայ աներեր,  
Դըժոխքին սեւ դուռներ  
Յազթեւ չեն կարող,  
Զայդ խոստացած է Տէր  
Անսուտ խոստումով:

Օ՛ն, Փրկչին զինուորներ: Եւն:

4. Օ՛ն, դուք ժողովուրդներ,  
Միացէ՛ք խումբին,  
Խառնեցէք ձայնն ալ ձեր  
Յազթ ութեան երգին:

Փա՛ռք , պատի՛ւ մեծ Փրկչին  
 Թագաւորին մեր .  
 Թող միշտ մեզ ձայնակցին  
 Մարդիկ , հրեշտակներ :

Օ՛հ , Փրկչին զինուորներ : Եւն :  
 ԹՐԳՄ . Լ . ԳԱՆՈՒՍՏԵԱՆ

### ՔՐԻՍՏՈՍ 'Ի ՄԷՁ ՄԵՐ

\*\*\*

Քրիստոս 'ի մէջ մեր յայտնեցաւ .  
 Որ է՛նն Աստուած աստ բազմեցաւ :  
 Խաղաղութեան ձայն հընչեցաւ  
 Սուրբ ողջունի հրաման տուաւ ,  
 Եկեղեցիս մի անձ եղեւ .  
 Համբոյրըս յօգ լըրման տուաւ :  
 Թշնամութիւնն հեռացաւ .  
 Սէրն յընդհանուրըս սփռեցաւ :  
 Արդ պաշտօնեա՛յք բարձեալ զձայն ,  
 Տո՛ւք օրհնութիւն 'ի մի բերան .  
 Միասնական Աստուածութեանն  
 Որում Սէրովբէքն են սըրբարան :

### ՍՈ՛ՒՐԲ , ՍՈ՛ՒՐԲ , ՍՈ՛ՒՐԲ

\*\*\*

Սո՛ւրբ , Սո՛ւրբ , Սո՛ւրբ , Տէ՛ր զօրութեանց ,  
 Լի՛ են երկինք և երկիր փառօք քօ . Օրհնու-  
 թի՛ւն 'ի բարձունս , Օրհնեա՛լ որ եկիր և գա-  
 լոցդ ես անուամբ Տեառն :

Ո՛վսաննա 'ի բարձունս :

Հա՛յր երկնաւոր , որ զՈրդիդ քօ հառուր 'ի  
 մահ վասն մեր՝ պարտապան պարտեաց մերոց  
 հեղմամբ Արեան Նորա ազաչեմք զքեզ , ողորմ-  
 եա՛ քօ բանաւոր հօտի :

Յամենայնի օրհնեա՛լ ես , Տէ՛ր . օրհնեմք  
 զքեզ . գովեմք զքեզ . գոհանամք զքէն , ազա-  
 չեմք զքեզ , Տէ՛ր Աստուած մեր :

Որդի՛՞ Աստուծոյ , որ պատարագեալ Հօր 'ի  
 հաշտութիւն , Հաց կենաց բաշխիս 'ի մեզ .  
 հեղմամբ Արեան Քօ սուրբ , ազաչեմք զքեզ ,  
 ողորմեա՛ Արեամբ քով փրկեալ հօտի :

### 346) ԼԱՒՈԳՈՅՆ ԵՐԿԻՐԸ (\*)

\*\*\*

1. Գերազմայլ , սուրբ խոկմանս պահուն  
 Երազանքովս՝ աչերս տեսան ,  
 Երկիր մը ջինջ , պայծառ , որուն  
 Տուքովն օծուն է ամէն բան :

(\*) The better Land (Christ in Song, 883).

(ԽԳԷ.) Երկիր սիրոյ, լուսոյ, խինդի  
 Փառքովդ գիշերն կ'ոսկեզօծի,  
 Մենք ալ տեսնենք պիտ' սուրբ եզերք  
 Երբ ծագի օր, խոյս տան սառերք:

2. Երկիր՝ որուն եզերքն չունի  
 Ստուեր կամ բիծ, հեռք խորշովի,  
 Պանդուխտներն հոն կը միանան  
 Ու չեն զատուիր ա՛լ յաւիտեան:

Երկիր սիրոյ, լուսոյ: Եւայլն:

3. Անոր կամարն երանգ չունի,  
 Փոփոխ լոյսին ու սեւ շուքին  
 Եւ ոչ կարօտն արեւծագին,  
 Տրուելու խոր գիշերն մթին:

Երկիր սիրոյ, լուսոյ: Եւայլն:

4. Այն երկրին մէջ մեզմ, հանդարտիկ  
 Չեն փշեր խիտ հով ու մրրիկ,  
 Թափառկոտն հոն տուն, հանգրուան  
 Գտնէ դրախտն եգեմական:

Երկիր սիրոյ, լուսոյ: Եւայլն:



30)

ԵՐԵՍ ԱՌ ԵՐԵՍ

\*\*\*

1. Փրկչիս հետ երես առ երես  
 Տեսնուիրն ի՛նչ փառք անտես.  
 Հիացմամբ երբ յառիմ Անոր,  
 Որ մեռաւ ինձի համար:

(ԽԳԸ.) Երես առ երես պիտ' տեսնեմ  
 Վերն՝ աստղազարդ կամարէն.  
 Համակ իր փառքովն՝ դէմ առ դէմ,  
 Պիտ' ճանչնամ Ձինքն օրէ օր:

2. Հիմա ազօտ կը նշմարեմ  
 Ձինք լսկ հայլիին մէջէն.  
 Բայց օրհնեալ օր մը պիտ' դայ երբ  
 Իր փառք դիտեմ վեհապանծ:

Երես առ երես պիտ' տեսնեմ: Եւլն:

3. Ի՛նչ հաճոյք իր ներկայութիւն  
 Ուր վիշտն ու ցաւ կ'անհետին.  
 Երբ ծուռ ճամբաներ կ'ուզուին  
 Եւ պարզին մութ խնդիրներ:

Երես առ երես պիտ' տեսնեմ: Եւլն:

4. Դէմ առ դէմ, ի՛նչ վայրկեան օրհնեալ,  
 Դէմ առ դէմ տեսնել, ճանչնալ,



Երես առ երես Փրկչիս հետ,  
Որ զիս սիրեց մեծ գուլթով:

Երես առ երես պիտ' տեսնեմ: Եւչն:

53) ՊԷՏԲ Է ԵՐԹԱՄ ԵՒ ՉԵՌՆՈՒՆՈՒՆԱՅՆ



1. Պէ՞տք է երթամ և ձեռնունայն  
Փրկչիս այսպէ՞ս երեսնամ.  
Օր մ'իսկ սիրոյ զործ մը չըրած  
Գէթ մէկ արարք յաղթագնաց:

Պէ՞տք է երթամ եւ յեռնունայն,  
Փրկչիս այսպէս երեսնամ,  
Գէթ մէկ հոգի մէկտեղ չառած  
Ինչպէս Փրկչիս ողջանեմ:

2. Մահն ինձ սոսկում, սարսուռ չըտար,  
Փրկչիս զիս կը փրկէ յար.  
Բայց դող կուտայ խորհուրդն անգամ  
Թէ ձեռնունայն պիտ' երթամ:

Պէ՞տք է երթամ և յեռնունայն: Եւայչն:

3. Մեղքի օրեր զուր, ամայի,  
Թէ յետս կոչել կրնայի.

Ես ծնրագիր Փրկչիս կամքին  
Պիտ' յանձնէի սրտագին:

Պէ՞տք է երթամ և յեռնունայն: Եւայչն:

4. Արի՛ք, սուրբեր, ո՞հ քաջ եղէ՛ք  
Գործեցէք մինչ է ցորեկ:  
Մահուան գիշերն գեռ չիհասած՝  
Սփռեցէք լոյս, կենաց հաց:

Պէ՞տք է երթամ և յեռնունայն: Եւայչն:

85)

Ի Ն Չ Ո՞ Ի



1. Հողւոյդ համար անձկակէզ,  
Մինչ կ'ազօթենք կարեկէր,  
Մինչ քու հայրդ կը կանչէ քեզ,  
Եղբայր, տուն գալ չի՞ս ուղեր:

Ինչ՞ - շատ, ինչ՞ - շատ,  
Ինչ՞ - Փրկչին չես գտր շատ,  
Ինչ՞ - շատ, ինչ՞ - շատ,  
Ինչ՞ - Փրկչին չես գտր շատ:

2. Արգէն շատ մուրեր ես,  
Օր մ'ալ մի՛ յետածգեր,

Հօրմէդ մի՛ դարձներ երես,  
Այսօր ընդունէ իր սէր:

Ինչ<sup>օ</sup> - շո՞ր: Եւայլն:

3. Սիրտդ չէ՞ գտած ուրիշ տեղ  
Անդսրը, հանգիստ անվրդով,  
Ե՛կ Յիսուսի, հոգւոյդ գեղ,  
Խաղաղութիւն կայ իր քով:

Ինչ<sup>օ</sup> - շո՞ր: Եւայլն:

4. Ե՛կ Փրկչին, բա՛ց սիրտդ Անոր,  
Եւ թողութիւն ա՛ն անկէ,  
Վստահէ անոր այսօր,  
Մինչեւ վերջ Քեզ պիտ՝ հսկէ:

Ինչ<sup>օ</sup> - շո՞ր: Եւայլն:

63)

Ն Ե Ր Ս Ա Ռ Զ Ի Ն Ք

⋮⋮⋮

1. Դուռն օտարական մը կայ,  
Ներս ա՛ն Զինք,  
Շատ անգամներ հոն է նա,  
Ներս ա՛ն Զինք:  
Ներս ա՛ն Զինք դեռ չի մեկած,  
Ներս ա՛ն Զինք այն սուրբ էակ:

Տէր Յիսուս Որդին Աստուած,  
Ներս ա՛ն Զինք:

2. Բա՛ց քու սիրտդ Անոր հիմա,  
Ներս առ Զինք.  
Թէ ուշանաս, հեռանայ,  
Ներս առ Զինք:  
Բարեկամդ է Զինք ներս ա՛ն.  
Հոգւոյդ քաջ պաշտպան արդար,  
Կը պահէ քեզ միշտ և յար,  
Ներս ա՛ն Զինք:

3. Հիմա լսէ՛ իր քաղցը ձայն,  
Ներս առ Զինք.  
Հիմա՛, ճիշտ, ս՛հ, ընտրէ՛ Զայն.  
Ներս առ Զինք:  
Դուռը կեցած կը զարնէ,  
Հոգւոյդ ժպիտ կը բերէ,  
Պաշտէ՛ անունն ի սրտէ:  
Ներս առ Զինք:

4. Ընդունէ՛, այն Հիւրն աննման,  
Ներս ա՛ն Զինք.  
Որ զարգարէ քու սեղան,  
Ներս առ Զինք:  
Մեղքերուդ տայ թողութիւն.  
Երբ երկրի կապերդ խզուին,  
Քեզ տանի իր հետ երկին:  
Ներս ա՛ն Զինք:



Բախէ, բախէ, մէկը բախէ սրտիդ դռնակ  
Ներս կ'առնե՞ս, ս'հ, Զինք, կ'առնե՞ս ներս :

1. Յիսուս սրտիդ կը զարնէ գուռ ,  
Մեղքի ուժէն խոնջ , գլխիկոր .  
Կը զարնէ միշտ թափովն բոլոր ,  
Ներս կ'առնե՞ս Զինք, ս'հ, ներս այսօր :

(ԽճՔ.) Ներս ա՛ն Զինք, ս'հ, ներս առ այսօր ,  
Որ սրբէ քու մեղքերդ բոլոր ,  
Կը զարնէ դուռն միշտ նոյն թափով  
Ներս առ Զինք որ հանգչի քու քով :

2. Սպասած է երկար, երկար ,  
Եւ կը զարնէ դեռ անդադար ,  
Զայն մերժելու չափ չար մ'ըլլար ,  
Ո՛հ մինչեւ ե՞րբ զարնէ զուր տեղ

Ներս առ Զինք, ս'հ, ներս առ : Եւ՛ն :

3. Թէեւ քիչ մ'ուշ, ներս ա՛ն նորէն ,  
Հոգիդ փրկել պիղծ մեղքերէն ,  
Փութա՛ , մինչ իր դուռներն բաց են ,  
Թերեւս վերջը շատ ուշ ըլլայ :

Ներս ա՛ն Զինք, ս'հ : Եւայն :



Յիշեսցուք ՚ի գիշերի զանուն քո Տէր :  
Բղխեսցեն սիրտք մեր զբան բարի, և լե-  
զուք մեր պատմեսցեն զգործս երկնաւոր թա-  
գաւորիդ :  
Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանես-  
ցուք զքեզ Տէ՛ր :

Զաղօթս մեր տացուք քեզ, Տէր, ՚ի գա-  
ւիթս քո ՚ի մէջ նոր Երուսաղէմի :

Ի գիշերի համբարձցուք զձեռս մեր սըր-  
բութեամբ առ քեզ, Տէ՛ր :

Ի ձայն գոհութեան ամենայն հոգիք օրհ-  
նեսցէք զՏէր :

Զարթի՛ք փառք իմ, զարթի՛ք, և ես  
զարթեայց առաւօտուց. Ալէլուիա :

Զարթի՛ք ընդ զուարթունս, մանկունք  
վերինն Սիօնի. Ալէլուիա :

Զարթի՛ք որդիք լուսոյ. ՚ի յօրհնութիւն  
Հօրն լուսոյ. Ալէլուիա :

Զարթի՛ք փրկեալք արեամբ, և տուք ըզ-  
փառս փրկողին. Ալէլուիա :

Զարթի՛ք նոր ժողովուրդք, նոր երգս  
առեալ նորագողին. Ալէլուիա :

Զարթի՛ք հարսունք հոգևով. սպասեալք  
գալոյ սուրբ փեսային. Ալէլուիա :

Զարթի՛ք վառեալք լուսով ըստ իմաստուն  
սուրբ կուսանացն. Ալէլուիա :

Զարթի՛ք պատրաստեցէք լուղք լապտերաց  
ղջերմ արտասուս. Ալէլուիա :

Զարթի՛ք և մի՛ ննջէք, նման յիմար կու-  
սից նիրհէք. Ալէլուիա :

Զարթի՛ք երկրպագուք, և արտասուօք  
զայս ասացուք. Ալէլուիա :

Զարթի՛ր ընդէ՞ր ննջես, Տէ՛ր, մի՛ մերժեր  
զմեզ իսպառ :

Արի՛, Տէ՛ր, օգնեա՛ մեզ. տացուք անուա-  
նըդ քում զփառս :

Այժմ և յաւէտ. Հօր և Որդւոյ, և Սուրբ  
Հոգւոյն. Ամէն :


Զարթուցեալքս՝ ի զբաղմանէ գիշերային  
հանգստենէ :

Շնորհեսցէ մեզ մարդասէր Տէր, մխիթա-  
րութիւն և ՚ի սփոփանս եկեղեցւոյ :

Ահի՛ւ և դողութեամբ կացցուք ՚ի յաղօթս :  
Եկեալ խոստովանեսցուք ըզյանցանս :

Եւ գտցուք ՚ի Քրիստոսէ զքաւութիւն և  
զմեծ գողորմութիւն :

Ամէն. Ալէլուիա. Ալէլ. Ալէլ.



## 91) ԷՆ ԼԱՒ ԲԱՐԵԿԱՄԸ

\*\*\*

1. Ո՛հ, էն լաւ բարեկամս է Յիսուս,  
Երբ կեանքի հոգեր վրաս կը խուժեն,  
Ան սիրտս բուժէ կարեւկէր  
Եւ կուտայ ոյժ, շնորհք ու սէր.  
Ո՛հ, էն լաւ բարեկամս է Յիսուս :

Էն լաւ բարեկամս է Յիսուս [կրկնէ]  
Կը կանգնէ թշ երբ կ'էջան,  
Կը լսէ թշ երբ կ'ողբան,  
Ո՛հ, էն լաւ բարեկամս է Յիսուս :

2. Ի՛նչ անուշ բարեկամ է Յիսուս,  
Հոգւոյս կը շնորհէ հանգիստ անզօրը,  
Իր հըզօր թեւին վտահ,  
Ոչ մէկ բանէ կըզգամ ահ.  
Ո՛հ, էն լաւ բարեկամս է Յիսուս :

Էն լաւ բարեկամս է Յիսուս : Եւայլն :

3. Թէ տխուր, մուսլ գիշերէն անցնիմ,  
Եւ կատաղի ալիքներ ուռին,  
Պէտք չէ վախնամ, մինչ այնքան  
Յիսուս մօտ՝ ինձ անբաժան.  
Ո՛հ, էն լաւ բարեկամս է Յիսուս :

Էն լաւ բարեկամս է Յիսուս : Եւայլն :

## 84) ՅԵՆՈՒԼ ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ԹԵԻԵՐՈՒՆ ՎՐԱՅ



1. Ի՛նչ մտերմութիւն, հրճուանք երկնային,  
Յենուլ մշտատե բազուկներուն,  
Ի՛նչ հեշտ օրհնութիւն, ի՛նչ անդօրրութիւն,  
Յենուլ մշտատե բազուկներուն:

Յենուլ... յենուլ...

Ձերձ, ապահով վտանգներէ

Յենուլ... յենուլ...

Յենուլ մշտատե բազուկներուն:

2. Ի՛նչ քաղցր է քալել այս ճամբէն օտար,  
Յենած մշտատե բազուկներուն.  
Օրէ օր ուղիս կը դառնայ պայծառ,  
Յենած՝ մշտատե բազուկներուն:

Յենուլ... յենուլ...: Եւլն.

3. Ալ ինչո՞ւ սոսկամ, ի՛նչ կայ վախնալիք,  
Յենած մշտատե բազուկներուն.  
Խաղաղ է սիրտս, մինչ Փրկչիս եմ մօտիկ,  
Յենած՝ մշտատե բազուկներուն:

Յենուլ... յենուլ: Եւլն.

## 72) ԻՐ ԹԵԻԵՐՈՒՆ ՇՈՒՔԻՆ ՏԱԿ



1. Իր թեւերուն շուքին տակ  
Կայ հանգիստ հեշտին,  
Կայ հանգիստ, զերձ դառն հոգերէ՝  
Հանգիստ, որ մեր սիրտ կը գերէ,  
Իր թեւերուն շուքին տակ  
Կայ հանգիստ հեշտին.  
Իր թեւերուն շուքին տակ  
Կայ հանգիստ:

Կայ հանգիստ... կայ անդօրր... կայ հրճուանք...

Իր թեւերուն շուքին տակ:

2. Իր թեւերուն շուքին տակ  
Կայ անդօրր խաղաղ.  
Կայ անդօրր հեշտ, անճառելի,  
Անդօրր խաղաղ, որ վերջ չունի,  
Իր թեւերուն շուքին տակ,  
Կայ անդօրր խաղաղ.  
Իր թեւերուն շուքին տակ  
Կայ անդօրր:

Կայ հանգիստ...: Եւայլն:

3. Իր թեւերուն շուքին տակ  
Կայ հրճուանք անխառն.  
Կայ հրճուանք Իր սէլին պատմելու,

Եւ երգել փառացն ալէլու ,  
 Իր թեւերուն շուքին տակ ,  
 Կայ հրճուանք անխառն ,  
 Իր թեւերուն շուքին տակ  
 Կայ հրճուանք :

Կայ հանգիստ . . . Եւայլն :

### 13) Ը Ս Է Մ Օ Ր Ս

\*\*\*

1. Երբ փոքր էի դեռ մի մանուկ  
 Ինչպէս լաւ կը յիշեմ .  
 Ինչքան հէք մօրս վիշտ կուտայի ,  
 Իմ յիմար , խեղ վարքովս :  
 Եւ հիմա որ սեռած՝ իր գիրգ  
 Խնամքին կարօտն քաշեմ :  
 Ով Փրկիչ , ըսէ մօրս , պիտ' ըլլամ հոն :
- (ԽճԷ .) Մօրս ըսէ , հոն պիտ' գամ ,  
 Իր աղօթքին պատասխան ,  
 Օրհնեալ Փրկիչ , աւետիս տո՛ւր իրեն :  
 Մօրս ըսէ , հոն պիտ' գամ ,  
 Բաժնեկու իր վայելքներն .  
 Մօրս անուշ , ըսէ , ս'հ , հոն պիտ' ըլլամ :

2. Ես շատ անգամ հեռ է ըմբոստ ,  
 Բայց մայրս ազնիւ , բարի ,

Միշտ ներող , սիրող , համբերող ,  
 Մինչ ես չար , անուղղայ :  
 Միբով կ'ըլլար վշտերուս ու  
 Փորձութեանցս կարեկիր :  
 Ով Փրկիչ , ըսէ՛ մօրս , պիտ' ըլլամ հոն :


Մօրս ըսէ՛ , հոն պիտ' գամ : Եւայլն :

3. Երբ հայրենի քաղցր յարկէն իբր  
 Անառակ հեռացայ .  
 Իր կտորած սիրտն տառապեցաւ  
 Լալով իմ ետեւէս :  
 Գիշեր ցորեկ աղօթեց որ՝  
 Տէրն հսկէ միշտ իմ վրաս :  
 Ով Փրկիչ , ըսէ մօրս պիտ' ըլլամ հոն :

Մօրս ըսէ՛ , հոն պիտ' գամ : Եւայլն :

4. Օր մ'ըշտապով գալու համար  
 Շուտ լուր տուին ինձի ,  
 Եթէ կ'ուզէի տեսնել մայրս ,  
 Փրկչիս դեռ չմեկնած :  
 Ես խոստացայ իր սնարին քով ,  
 Երկնից համար ապրիլ :  
 Ով Փրկիչ , ըսէ՛ մօրս , պիտ' ըլլամ հոն :

Մօրս ըսէ՛ հոն պիտ' գամ : Եւայլն :



## 69) ՄՕՐՍ ԲԱՐԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ

\*\*\*

1. Երբ հիւզակին մէջ փոքր, յաճախ  
Մեղմ ստուերներ կ'երկարին .  
Մինչ արեւուն ցուք հեղօրէն  
Դէմքն շոյէ պատէն առկախ :  
Հոն միայնակ սիրելիներ ,  
Կուգան գողալը շեշտերով  
Գործած սխալներնուն համար  
Ներում հայցել իրարմէ :

(Խֆք .) «Ի՞նչ սովորոյթ է այս, հարցնեմ,  
Իրիկնամուտի պահուն»,  
«Քանզի , կըսեն ինձ ժպտադէմ,  
Այսպէս կընէր մեր քաղցր մայր» :

2. Մերթ մեր սիրտ երբ թախիժ զգայ  
Կամ մեր գործեր խիստ դժուար,  
Եւ երբ բեռներ ծանր ու հսկայ  
Մեր ուսերն ճնշել թուին .  
Նոր քաջութեամբ լեցուած յայնժամ  
Անգամ մըն ալ կը կրկնենք .  
«Մեր կատարենք պարտք քաջարար,  
Ինչպէս կընէր մեր քաղցր մայր» :

(Խֆք .) Անուշ մայրիկ, քաղցր մայրիկ  
Բարի մայրիկ, սուրբ, արդար,

Հիմա փրկչիդ հետ միշտ խաղաղ,  
Սիրելիք քեզ յիշեն յար :

3. Որչափ անգամ այդ դէմքն անուշ  
Պատին վրայ մեզ կը ժպտի,  
Աւելի թանգ դառնայ իր յուշ,  
Մինչ իր Փրկչին կը դիմենք :  
Եւ ստուերներն երբ իրիկուան,  
Կեանքի օրուան վերջն ցոյց կուտան,  
Մեզ կըսպասեն որ նոյն ճամբով  
Տուն երթանք մայրիկին պէս :

(Խֆք .) Անուշ մայրիկ, քաղցր մայրիկ  
Բարի մայրիկ սուրբ, արդար,  
Հիմա փրկչիդ հետ միշտ խաղաղ .  
Սիրելիք քեզ յիշեն յար :

## 36) ԱՅՍ ԿՈՂՄ ԿԸ ՆԱՅԻՆ

\*\*\*

1. Գետէն անդին դէմքեր կը տեսնեմ  
Առտուան պէս պայծառ , որ կը նային ,  
Զերձ հոգերէն , վիշտերէն դժխեմ,  
Կըսպասեն մեզ միշտ հոն սրտագին :

Այս կողմ կը նային , այս կողմ կը նային ,  
Կըսպասեն սիրելիներ անդին ,  
Առտուան պէս պայծառ , օրուան պէս ջնջ ,  
Փառաց զօրէն այս կողմ կը նային :

2. Հայր, մայր հովտին մէջ միշտ ապահով  
Նային նաւազին ու նաւակին,  
Որ ալիքէն գետափն հասնելով  
Ձաւակներն յանձնեն իրենց գրկին:

Այս հոգի կը նային: Եւայլն:

3. Երկնածեմ մարգին վրայ քոյր, եղբայր,  
Կըսպասեն մերթ բարեկամներուն,  
Հըրեշտակաց հետ զուարթաբար  
Ողջունելու նորեկներն երկրին:

Այս հոգի կը նային: Եւայլն:

4. Անուշ պղտիկներն ճըրագներն՝ տան  
Ձեռքով մէկին գալ նշան կ'ընեն,  
Շաղի պէս պայծառ, վառ շողի նման,  
Բեզ կը նային, մայր, քեզ անձկօրէն:

Այս հոգի կը նային: Եւայլն:

5. Յիսուս Փրկիչ, պայծառ աստղն աստուան,  
Կըսպասէ հէք կորսուածներուն,  
Լսէ՛ Ձինք, ինչո՞ւ թափառական  
Հոս հոն կը շրջիս, տուն դարձի՛ր, տուն:

Այս հոգի կը նային: Եւայլն:

## ՓՈԹՈՐԿԻ ԱՏԵՆ ԱՊԱԽԷՆ (\*)

\*\*\*

1. Մեր վէմն է Տէր հոն կը դիմենք  
Փոթորկի ատեն ապաւէն.  
Ձերձ վտանգէ, մեր վէմն է զէնք,  
Փոթորկի ատեն ապաւէն:

(Խֆք.) Ո՛հ ամայի երկրիս վըրայ վէմ Յիսուս  
վէմ է Յիսուս  
վէմ է Յիսուս.  
Ո՛հ, ամայի երկրիս վըրայ վէմ Յիսուս,  
Փոթորկի ատեն ապաւէն:

2. Գիշերն տաք բոյն, ցերեկն՝ ստուեր,  
Փոթորկի ատեն ապաւէն.  
Արհաւիրք, վախ մեզ չ'են ազդեր,  
Փոթորկի ատեն ապաւէն:

Ո՛հ, ամայի երկրիս վըրայ: Եւլն.

3. Թող մունչեն գոռ մորիկներ,  
Փոթորկի ատեն ապաւէն.  
Մեր ապաստան բնաւ չ'ենք լըքեր  
Փոթորկի ատեն ապաւէն:

Ո՛հ, ամայի երկրիս վըրայ: Եւլն.

(\*) Lord's our rock (Sacred Songs and Solos, 664)



4. Քաղցր ապաւէն, վէ՛մ երկնային,  
Փոթորկի ատեն ապաւէն.  
Մեր աչքեր միշտ Քեզ թող նային,  
Փոթորկի ատեն ապաւէն:

Ո՛հ, ամայի երկրիս վըրայ: Եւն՛.

### Տէ՛ր, ՈՂՈՐՄԵՍ՛

⋮⋮⋮

Սճէ՛ն. Հայր Սուրբ, Որդիդ Սուրբ, Հոգիդ  
Սուրբ:

Օրհնութիւնն Հօր և Որդւոյ և Սրբոյ Հոգ-  
ւոյն. Այժմ և միշտ և յաւիտեանս յաւ. Ամէն:

Տէ՛ր, ողորմեա.

Տէ՛ր, ողորմեա.

Տէ՛ր, ողորմեա:

Տէ՛ր, ողորմեա:

Արի՛ Աստուած, հարցն մերոց  
Որ ապաւէնդ ես նեղելոց,  
Հա՛ս օգնութիւնն ծառայից քոց,  
Լե՛ր պահապան ազգիս Հայոց:

Տէ՛ր, ողորմեա

Տէ՛ր, ողորմեա

Յիսուս Քրիստոս,  
Մեզ ողորմեա՛:

Ամենասուրբ Երրորդութիւն,  
Տուր աշխարհիս խաղաղութիւն,  
Եւ հիւանդաց բժշկութիւն,  
Ազգիս Հայոց սէր, միութիւն:

### Լ Ա Ւ Ա Գ Ո Յ Ն Ե Ր Կ Ի Ն Ք Ը (\*)

⋮⋮⋮

1. Թէ արեւներ մեծապայծառ  
— Մշտարձարձ, բորբ, հսկայ ջահեր,  
Ոսկեգօծեն անոր կամար,  
Դեռ իմ երկինքս չեն յօրիներ:

(Խճբ.) Երկինք լուսոյ, սիրոյ լինչ է,  
Թէ Փրկչիս դէմք չը ճաճանչէ,  
Հեշտ գարուններ վարդաբուրեան,  
Սոսկ անոր գիրկ կը միանան:

2. Դեռ իմ երկինքս չեն յօրիներ,  
Թէեւ արցունք ու խաչ դադրին,  
Եւ միանան սերտ հոգիներ,  
Համբոյրներու մէջ անմեկին:

(\*)The Better Landի եղանակով (Christ in Song, 883)

Երկինք սիրոյ, լուսոյ: Եւայլն:

3. Համբոյրներու մէջ անմեկին,  
Երկինք մը շուրջս թէ պարուրէ,  
Երբ ու պաշտանք, խունկ, բարութիւն,  
Ես դեռ հարցնեմ «Երկինքս ո՞ւր է»:

Երկինք սիրոյ, լուսոյ: Եւայլն:

4. Եւ դեռ հարցնեմ «Երկինքս ո՞ւր է»  
Զուր կը փնտռեմ հեռու վայրեր,  
Հոս ինձ համակ Եդեմ բուրէ,  
Մինչ սրտիս մէջ կ'ապրի իմ Սէր:

Երկինք սիրոյ, լուսոյ: Եւայլն:  
ԱԿԻԼԻՆԷ

### Կ Ե Ն Ա Յ Հ Ա Յ Ը (\*)



1. Բաշխէ Դու, կենաց հաց,  
Ով Տէր, ինձի,  
Ինչպէս երբեմն հացերն  
Հըրաշալի:  
Տէ՛ր, Սուրբ Բանիդ մէջէն  
Քեզ կը փնտռեմ,  
Հոգիս պապակի Քեզ  
Կարօտակէզ:

2. Դու ես սուրբ կենաց հաց.  
Ով Տէր, ինձի.  
Քու խօսքդ՝ ճշմարտութիւն,  
Կը փրկէ ձրի:  
Տո՛ւր ինձ ուտել, ապրել,  
Վերն Քեզի հետ,  
Սիրել ճշմարտութիւն  
Զի Սէր ես Դուն:

3. Հոգիդ, ո՛վ Տէր, զրկէ  
Հիմա ինձի.  
Որ տեսնելու համար  
Աչքիս հըպի:  
Յայտնէ՛ խօսքիդ պահուած  
Ճշմարտութիւն,  
Եւ Գրքիդ մէջ տեսնեմ  
Տէրս սիրադէմ:

4. Ճշմարտութիւնն, ո՛վ Տէր,  
Օրհնէ ինձի:  
Ինչպէս հացն օրհնեցիր  
Գալիլիայի:  
Օն, դադրի գերութիւնս,  
Կապերս քակուին:  
Եւ «Ամէնուն-Ամէն»  
Յայնժամ գտնեմ:

(\*) Break Thou the Bread of Life (Christ in Song, 384)

Գ Ա Ռ Ն Ո Ւ Կ Ի Ն Ա Ր Ի Ի Ն Ը (\*)

⋮

1. Օրհնութիւն, փառք արեան ուղիսին  
 Որ աշխարհին յայտնուեցաւ,  
 Օրհնեալ՝ Որդի, Աէր-Յատուծոյ  
 Որուն վէրքերն բուժեց մեր ցաւ:  
 Թէեւ երկար թափառայած,  
 Էս Քու գրկէդ եմ հեռացած.  
 Լուա՛ զիս Արիւնսիւն Գառլին,  
 Որ ըլլամ ձերմակ քան ըզձիւն:

(ԽՏՔ.) Ձերմակ քան ըզձիւն  
 Ձերմակ քան ըզձիւն,  
 Լուա՛ զիս արիւնսիւն Գառլին,  
 Որ ըլլամ ձերմակ քան ըզձիւն:

2. Գլուխն դրաւ փուչէ պսակ,  
 Խաչի մահուան կրեց սուր ցաւ,  
 Անլուր վէրքեր, վշտաշարճար,  
 Բայց, ոչ ի զուր, տառապեցաւ:  
 Այդ ազբիւրիս զիս տանէին,  
 Մեղքերս մաքրել բոլորովին.  
 Լուա՛ զիս արիւնսիւն անգին,  
 Որ ըլլամ ձերմակ քան ըզձիւն:

(\*) The Blood of the Lamb (Sacred Songs and Solos, 396)

Ձերմակ քան ըզձիւն: Եւայլն:

3. Հայր, աստանդական շատ անգամ՝  
 Սիրտս հեռու պահեր եմ ֆեզմէ,  
 Մեղքերս որդան պէս, ս՛հ, կարմիր,  
 Զոր ջուր մաքրել չէ, կարող չէ:  
 Յիսուս, յենած խոստմանդ ես հոս,  
 Կուգամ ազբիւրիդ սիրահոս,  
 Մաքրէ ջուրովդ Աստուածային,  
 Որ ըլլամ ձերմակ քան ըզձիւն:

Ձերմակ քան ըզձիւն: Եւայլն:

40) ՅԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

⋮

1. Շիրմին խորն անկենդան — Յիսուս,  
 Փրկիչըս,  
 Կը սպասէ մեծ Օրուան — Յիսուս,  
 Իմ Տէ՛րս:

(ԽՏՔ.) Ի մեռելոց Տէրն յարեաւ,  
 Հզօր յաղթութեամբ մահուան դէմ խաւար,  
 Իբր յաղթական յարեաւ անդունդէն ամբաւ,  
 Կապրի միշտ սրբոց հետ տիրելու համար:  
 Տէր յարեաւ, Տէր յարեաւ,  
 Ալէլուիա, Տէր յարեաւ:

2. Զո՛ւր կը հըսկեն իր սնարն — Յիսո՛ւս,  
Փրկիչըս :  
Զո՛ւր կը կնքեն և քարն — Յիսո՛ւս,  
Իմ Տէրս :  
Ի մեռելոց Տէրն յարեալ : Եւայլն :

3. Մահն պահել չը կրնար, իր որսն —  
Փրկիչըս :  
Նիգերն կոտրեց խաւար — Յիսո՛ւս  
Իմ Տէրս :  
Ի մեռելոց Տէրն յարեալ : Եւայլն :

### Մ Ա Հ Է Ս Վ Ե Ր Զ Ը (\*)



3. ՃԵՆԱՆԵԱՆ

1. Մահէս վերջը սիրելիներ  
Գիտեմ զիս շատ պիտի սիրեն,  
Խունկ ու ծաղիկ, պսակ ու սէր  
Պիտ' հետեւին ախար շիրմիս :  
Բայց ի՛նչ կ'ըլլար հիմա տրուէր,  
Բուրումն անոնց և շնչէի :

(\*) Եղանակը մասնաւորապէս պատրաստուած Բրոֆ.  
Ս. Էմիւրեանի կողմէ Ամերիկա :

2. Մահէս վերջը անուանս համար  
Գիտեմ գովեստ պիտի հիւսեն,  
Բայց այժմ գործերս ծանր ու դժուար,  
Զօրավիգի կը կարօտին :  
Հիմա մինչ ես կ'ապրիմ տկար,  
Գորով, ժպիտ ինձ կեանք կուտան :
3. Մահէս վերջը — սրտեր անգին —  
Սեւ դագաղըս ծանր՝ ուսամբարձ,  
Յուրա գերեզման պիտի տանին .  
Բայց ո՛հ, հիմա թէ կրէին,  
Բեռիս մէկ մասն իրենց ուսին,  
Ս.յնքան կանուխ չէի մեռներ :
4. Մահէս վերջը կը մոռցուին  
Թերութիւններս ու սեւ մեղքերս .  
Եւ սոսկ ազնիւ մէկ արարքս սին,  
Կը վերջիշուին սուրբ պաշտանքով :  
Բայց այդ ներող քաղցր նայուածքին՝  
Հիմա է որ շատ պէտք ունիմ :
5. Հիմակ մէկ վարդ, սակայն վաղուան,  
Ծաղկաստանն է վարդաբուրեան,  
Լոկ մէկ նայուածք համակրութեան,  
Հազար ներքող, գովեստ կ'արժէ :  
Շիթ մը խրախոյս մահէս առաջ  
Արցունքի ծով մ'է ինձ համար :

109)

Դ Ո՞Ւ Ն Է Ի Բ



- 1. Մէկը սիրուն ընծայ մ'ըրաւ,  
Ջանաց վերցնել բեռ մը դժուար:  
Մէկն Փրկչին սէրն պատմեց ամբաւ,  
Թ' ի՛նչպէս իր անձ գոհեց յօժար:  
    Դո՞ւն էիր այն մէկը.  
    Դո՞ւն էիր այն մէկը:
- 2. Մէկը բարի արարք մ'ըրաւ,  
Իբր բարեկամ հէք թշուառին:  
Մէկն երգեց երգ մը սրտագրաւ,  
Յանեւով խինդ, ծիծաղ չորս դին:  
    Դո՞ւն էիր այն մէկը.  
    Դո՞ւն էիր այն մէկը:
- 3. Մէկն իր օրեր վատնեց ի զուր,  
Ոսկի շղթան փշրեց կեանքին:  
Մէկն չգիտցաւ բարին ու սէր,  
Մէկուն չեղաւ լոյս, օրհնութիւն:  
    Դո՞ւն էիր այն մէկը.  
    Դո՞ւն էիր այն մէկը:

- 4. Մէկն ըսաւ « Կեանքն ի՞նչ քաղցր է,  
Երբ զայն կրնամ տալ ուրիշին »:  
Մէկն յաղթական դարձաւ կռուէ,  
Քաջարար ապրեցաւ Բարին:  
    Դո՞ւն էիր այն մէկը.  
    Դո՞ւն էիր այն մէկը:

139)

ՓՐԿՉԻՍ ԿԸ ՀԵՏԵԻԻՄ



- 1. Ի՞նչ քաղցր իր խոստումներ, խօսքերն բարի.  
Խիստ թանկ, անուշ, լսուած բոլոր պատգամներէն,  
Մաքուր էր Փրկչին սիրտք, անմեղ, անբիծ.  
Մեծ օրինակ մ'է ինձ համար և քաջ տիպար:  
  
(ԽճԲ.)      Ուր առաջնորդէ զիս,  
                  Հետեւիմ իրեն.  
                  Ուր առաջնորդէ զիս,  
                  Կը հետեւիմ միշտ Փրկչիս:  
  
2. Ի՛նչ քաղցր է քնքուշ սէրն, զոր Ան յայտնեց.  
Այնքան անուշ, ս՛հ, մարդուն ճանչցած սէրերէն,  
Մեղաւորին՝ զթած, հաւատարիմ,  
Մեծ օրինակ մ'է ինձ համար և քաջ տիպար:  
  
                  Ուր առաջնորդէ զիս: Եւսչին:

3. Լսէ՛ իր խօսքն սիրուն « Ինծի եկո՛ւր »,   
 Ո՛վ վշտաբեկ, յոգնած հոգի, հանգիստ կայ քեզ :   
 Վստահէ՛ միշտ անկեղծ իր խոստմունքին ,   
 Յենո՛ւր Փրկչիդ վերայ , հոգիդ է ապահով :

Ուր առաջնորդէ զիս : Եւայլն :

ԹԱՐԿՄ. Յ. ԹԸԴԸՐԵԱՆ

## 99) Հ Ա Յ Ո Ի Ն Ք Ա Յ Լ Ե Ր Գ Ը

\*\*\*

1. Ո՛չ, թէեւ ընկճըւած, խաչուած ,   
 Մենք կը մնանք խրոխտ, կանգուն ,   
 Միշտ խոշտանգուած , բայց վերն՝ Աստուած ,   
 Ստոյգ է մեր յաղթութիւն :

(ԽԳ .) Մենք վարդանի . . . սուրբ արիւնին ,   
 Մենք վարդանի սուրբ արիւնին ,   
 Ժառանգներն ենք անմեկին ,   
 Թէեւ անգօր իյնանք գետին ,   
 Նորէն մեզ մնայ յաղթութիւն .   
 Նորէն մեզ մնայ յաղթութիւն .   
 Նորէն մեզ մնայ յաղթութիւն .   
 Թէեւ անգօր իյնանք գետին ,   
 Նորէն մեզ մնայ յաղթութիւն :

2. Դարեր , ազգեր մեզ լըքեցին ,   
 Հալածական , տարագիր ,   
 Մեր կապանքին եկեղեցին ,   
 Մեր աուն , մեր կեանք , պատիւ , գիր ,

Բայց վարդանի . . . սուրբ : Եւայլն :

3. Ո՛չ սուր ունինք , թնդանօթ , զէնք ,   
 Ո՛չ պետութիւն . ո՛չ բանակ .   
 Մեր զօրապետ Յիսուս կ'ուզենք ,   
 Ճշմարտութիւնն՝ յաղթանակ :

Օն , վարդանի սուրբ արիւնին : Եւն :

4. Խաղաղութեան քաջ զինուորներ ,   
 Մենք գէժ ենք պատերազմին .   
 Ա՛լ բաւ նախճիր , արիւն , աւեր ,   
 Պատերազմն է թշնամին :

Օն , վարդանի սուրբ արիւնին : Եւն :   
 ԱԿԻԼԻՆԷ

## ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՉԻՆՈՒՈՐԻՆ ԵՐԳԸ (\*)

\*\*\*

1. Հապօ՛ն , արիք զինուորներ քաջ ,   
 Դեռ կատարեալ չէ եղած .   
 Չարին ու սեւ ժանտ խաւարին ,   
 Զախշախիչ , սուր պարտութիւն :

(\*) Lord's our Rock ի եղանակով (Sacred Songs and Solos, 512)

- (Խճ.) Օ՞ն , մեր Զօրապետն է քաջ  
 Հապօ՞ն , յառաջ ,  
 Հապօ՞ն , յառաջ ,  
 Հապօ՞ն , յառաջ ,  
 Օ՞ն մեր զէնքն է իր սուրբ Խաչ ,  
 Հապօ՞ն յառաջ .  
 Եւ պաշտպան՝ իր հզօր աջ :
2. Մեր ցեղն եղած է առաջին ,  
 Խաչակիրը մեծ Վրչախն :  
 Մենք Վարդանի պէս հըզօր , քաջ ,  
 Նահատակներ ենք տուած :
- Օ՞ն , մեր Զօրապետն է քաջ : Եւ այլն :
3. Մենք մարդուն դէմ չունինք պայքար ,  
 Արեան ծարաւ չենք զգար :  
 Նենգ բռնութեան ու մեղքին հետ ,  
 Կուուիլ կ'ուզենք առ յաւէտ :
- Օ՞ն մեր Զօրապետն է քաջ : Եւ այլն :
4. Մեր կուուագաշան է այս աշխարհ ,  
 Մեր թշնամին՝ մեղքն ու չար :  
 Մեր սուրը՝ սէր , գութ սրտագին ,  
 Եւ մեր մահը՝ յաղթութիւն :

Օ՞ն , մեր Զօրապետն է քաջ : Եւ այլն :  
 ԱԿԻԼԻՆԷ

## ԼՍԵՑԷՔ ԶԱՅՆՆ ԹՇՈՒԱՌԱՅ (\*)

\*\*\*

1. Լըսեցէք ձայնն թշուառաց  
 «Օգնութիւն դեռ չը մեռած .  
 Առէք թեւերն առտըան ,  
 Փշրեցէք մութին շղթան .  
 Դիպած էք գանձեր հերիք ,  
 Դագրեցէք դէթ մէկ պահիկ ,»  
 Լըսեցէք ձայնն թշուառաց ,  
 «Օգնութիւն դեռ չը մեռած :»
2. Զայնն է ան մահամերձին ,  
 Զոր մարդիկ դեռ չը խնամեցին .  
 Ոհ , հասիր , երբ ուշ չէ դեռ  
 Ու կեանքի թելն չէ փրթեր .  
 Թող երգ , աղօթք դագարին ,  
 Երբ լսուի ձայնն թշուառին ,  
 Զայն տխուր մեղաւորաց՝  
 «Օգնութիւն դեռ չը մեռած :»
3. Մեր Տէրօջ փարախէն դեռ  
 Ոհ , հեւու են խիտ շատեր .  
 Մինչև անոնք ալ փրկուին  
 Քուն մի՛ տաք դուք ձեր աչքին .

(\*) Hark, the Macedonian Cry (Songs of Praise and Prayer).

«Անտարբեր եղաք հերիք»,  
 կը կոչեն մեղաց գերիք.  
 Լըսեցէք ձայնն թշուառաց,  
 «Օգնու թի՛ւն դեռ չը մեռած»:

ԹԱՐԳՄ. Յ. Թ. ԳԱՅԱՆԱՆ

## Տէր, Փոթորիկն է ՉԱՅՐԱԳԻՆ (\*)

\*\*\*

1. Տէր, փոթորիկն է զայրագին,  
 Ալիքներ կը բարձրանան.  
 Սեւ ամպերով գոցուած է երկին,  
 Չիկայ մօտը ապաստան:  
 Անտարբեր ես մեր կորըստեան,  
 Ինչպէս կը նիրհես դեռ,  
 Մինչ մեզ կը վարէ ամէն մէկ վայրկեան  
 Դէպի մահուան անդունդներ:

(ԽճՔ.) Հոյն ու ծով պիտի անսան քու ձայնիդ՝  
 «Լո՛ւս կեցէք»,»

Չայրացած ծով ու հովեր սաստիկ,  
 Դեւերու բանակ կամ անզգամ մարդիկ  
 Չեն կրնար հասցընել նաւուն արկած,  
 Հոն երկնից և երկրի տէրն է պառկած.

(\*) Master, the tempest is raging (Gospel Hymns)

Ամէնքն ալ անսան պիտի ձայնիդ՝  
 «Լո՛ւս կեցէք»,»

Ամէնքն ալ անսան պիտի ձայնիդ,  
 «Լո՛ւս, լուս կեցէ՛ք»:

2. Տէր, տաղնապներով դառն և հոծ  
 Սրտարեկ եմ ես այսօր.  
 Հոգիիս խորքերն են ալեկոծ,  
 Ելիւր. փրկէ, Տէր հրզօր:  
 Մեղքի և վիշտի հեղեղներ  
 կը կոծեն իմ հոգին.  
 կը կորսուիմ, կը կորսուիմ, ո՞վ Տէր,  
 Փուլթա, տիրէ իմ կեանքին:

(ԽճՔ.) Հոյն ու ծով պիտի անսան: Եւայլն:

3. Տէր, անցաւ ժամ տաղնապալի,  
 Լուս են տարրեր բովանդակ,  
 Արեւ լիճին մէջ կ'արտափայլի,  
 Դէմքիդ լոյսն ալ կուրծքիս տակ.  
 Կեցիր, Փրկիչ իմ աննըման,  
 Մինակ սի թողուր դիս,  
 Հիւր եղիր ինձի մինչև գերեզման,  
 Եւ հետըդ առ իմ հոգիս:

(ԽճՔ.) Հոյն ու ծով պիտի անսան: Եւայլն:

ԹԱՐԳՄ. Յ. Թ. ԳԱՅԱՆԱՆ



## Տ Է Ր Ո Ջ Ճ Ս Մ Բ Ա Ն (\*)

⋮

1. Ուր որ ալ ըլլաս դուն,  
Ինչ ալ տեսնես հմայուն,  
Որ ուզէ քեզ մտրտեցընել, ըսէ՛ «Ոչ», ըսէ՛ «Ոչ  
Ես չեմ դառնար ճամբէս,  
Փորձի՛չ, զուր ջանք թափես,  
Եւ միշտ պիտի բռնեմ ուղիդ ճամբան Տէրոջ:»

(Խճ.) Տէրոջ ճամբան, Տէրոջ ճամբան.  
Քեզ կը խաբեն փայլուն հըմայք և ոչ  
մէկ բան.  
Ուր որ ալ ըլլաս դուն,  
Ինչ ալ տեսնես հմայուն,  
Պահիկ մը խակ, ո՛հ, մի՛ թողուր Տէրոջ  
ճամբան:

2. Կից զարտուղի ճամբուն  
Դաշտն է կանանչ համբուն.  
Ծաղիկներ հմայիչ հրաւէր կը կարգան, կը  
կարգան.

Ըզգոյշ ո՛վ անփորձ մարդ,  
Լարած են քեզ թակարդ,  
Պահիկ մը խակ, ո՛հ, մի՛ թողուր Տէրոջ ճամբան:

(Խճ.) Տէրոջ ճամբան, Տէրոջ ճամբան: Եւ այլն:

(\*) Wherever you may be (Songs of Praise and Prayer)

3. Այն գրաւիչ դաշտին վրայ  
Դժողքի շունչ կը սուրայ,  
Եւ անթիւ ձայներ քեզ կեցնել կը ջանան, կը  
Անոնց ծաղրանքներուն [ջանան.  
Ականջներդ գոցէ դուն,  
Պահիկ մը խակ, ո՛հ, մի՛ թողուր Տէրոջ ճամբան:

(Խճ.) Տէրոջ ճամբան, Տէրոջ ճամբան: Եւ այլն:

4. Մեզ լոյս պիտի տայ Տէր,  
Զորին մէջն ենք մինչ դեռ,  
Եւ հասնինք պիտի պըսակին անխափան, ան-  
Երբ Իր գահին գիմեն [խափան.  
Երկրիս ամէն կողմէն  
Բոլոր անոնք՝ որ պահած են Տէրոջ ճամբան:

(Խճ.) Տէրոջ ճամբան, Տէրոջ ճամբան: Եւ այլն:  
ԹԱՐԳՄ. Յ. Թ. ԳԱՅՆԵԱՆ

## Վ Է Մ Ի Ն Շ Ո Ի Ք Ը (\*)

⋮

1. Թողէք վէմին շուքին տակ  
Շանգչիմ ես,  
Երբ շըշեն մըրիկ, կայծակ  
Սաստկապէս.

(\*) In the shadow of the Rock (Songs of Praise and Prayer)

- Զուր կը գոռայ կատարի հով,  
 Զեմ վախկոտ,  
 Կըզգամ ես զիս ասպահով  
 Կուրծքիդ մօտ:
2. Երբոր ըլլայ իմ ուզին  
 Զոր, տըխուր,  
 Եւ արեւը կէս օրին  
 Տեղայ հուր,  
 Թողէք զիմեմ հանդարտ, զով  
 Ըստուերին,  
 Որ յօգնած ծունկերս շուտով  
 Կազդուրին:
3. Հանգչիմ մինչև այն ատեն  
 Երբ յետին  
 Ամպեր երկնից ճակատէն  
 Անհետին,  
 Ու հեռանայ սօթազին  
 Միջօրէն,  
 Որ ճամբաս վարեմ կրկին  
 Քաջօրէն:
4. Ետիս թողած շահ, վրնաս,  
 Ամէն բան՝  
 Յառաջ վարեմ ես ճամբաս  
 Անխափան,  
 Եւ սրտաբուզիս թարմ երգով  
 Վերթեւեմ,  
 Մինչև հասնիմ գահիդ քով,  
 Անմահ վէմ:
- ԹԱՐԳՄ. Յ. Թ. ԳԱՅԱԵԱՆ



## Լ Ո՞Յ Ս ԴՐ ԿԷ . . . (\*)

\*\*\*

1. Ո՞հ, այիքներ այս լ՞նչ հառաչ կը բերեն,  
 Լո՞յս զըրկէ, Լո՞յս զըրկէ:  
 Շա՛տ հոգիներ կան փրկելու խաւարէն.  
 Լո՞յս զըրկէ, Լո՞յս զըրկէ:
- (ԽճՔ.) Ո՞հ, զըրկեցէք Լոյսն սուրբ Խօսքին,  
 Թող փայլեցնէ ամէն զին:  
 Ո՞հ, զըրկեցէ՛ք գուք սուրբ Մատեանն,  
 Տարածուի միշտ, անխափան:
2. Ա՛րդ, այս լուրը մենք լըսողներս անձնուէրք  
 Լոյս զըրկենք, Լոյս զըրկենք:  
 Սէր-Աստուծոյն մատուցանենք մեր նուէր,  
 Լոյս զըրկենք, Լոյս զըրկենք:  
 Ո՞հ, զըրկեցէ՛ք: Եւ այլն:
3. Տէրօջ շնորհքն առատանայ ամէն զին  
 Լոյս զըրկենք, Լոյս զըրկենք  
 Թող բընակի մեր մէջ Փրկչի սէր-հոգին.  
 Լոյս զըրկենք, Լոյս զըրկենք:  
 Ո՞հ, զըրկեցէ՛ք: Եւ այլն:  
 ԹՐԳՄ. Է. Գ. ՇԻՐՈՅԵԱՆՅ

(\*) Send the Light (New Hymns and Solos, 120)

ԻՆՉՈ՞Ւ ՊԱՐԱՊ ՀՈՍ ԿԸ ԿԵՆԱՍ

⋮

1. Ինչո՞ւ պարապ հոս կը կենաս, քեզ գործ կայ  
Այգիլին մէջ՝ ուր սէզեր կան բարձր, գըժնէ:  
Հասուն պտուղն անխընամ կը փըճանայ:  
Ինչո՞ւ պարապ կը կենաս. Տէրն կը հարցնէ:

(Խօք.) Ինչո՞ւ պարապ հոս կը կենաս օրն ի բուն,  
Ո՞հ, օրն ի բուն ինչո՞ւ պարապ:  
Հունձքը կ'անցնի, կ'անցնի ի զուր, ա-  
պարգիւն.  
Հունձքը շուտով կ'անցնի պարապ:

2. Ինչո՞ւ պարապ հոս կը կենաս, քու դրացին  
Թշուառ, անտէր՝ կարեկցութեանդ պէտք ունի.  
Կարօտ է նա կերակուրին, հանդերձին,  
Օգնէ՛ անօր, ըսփոփէ՛ սիրան վշտունի:

Ինչո՞ւ պարապ: Եւայլն:

3. Ինչո՞ւ պարապ կը կենաս, թագ ու քնար կան  
Երկընքին մէջ, որդիներուն արժանի,  
Որոնք անխոնջ աշխատեցա՞ն, քրանեցա՞ն,  
Ա՛րդ, գործէ՛ և մըտիր երկինք հանգստի:

Ինչո՞ւ պարապ: Եւայլն:

ԹՐԳՄ. 2. Գ. ՇԻՐՈՅԵԱՆՑ

67) ԵՐԲ ՓՐԿԻՉՍ ԱՆՈՒՆՍ ԿԱՐԳԱՅ

⋮

1. Երբ Տէրոջ փողն հնչէ, և ա՛լ ժամանակներ  
վերջանան.  
Եւ փառաւոր, ջինջ ծագի այգ, անվախճան:  
Երբ փրկեալներ միւս կողմ ոսկի եզրին վըրայ  
միանան,  
Եւ Փրկիչս անունս կարգայ, ես հոն կ'ըլլամ:

(Խօք.) Երբ Փրկիչս անունս կարգայ հոն,  
Երբ Փրկիչս անունս կարգայ հոն,  
Երբ Փրկիչս անունս կարգայ հոն,  
Երբ Փրկիչս անունս կարգայ, ես հոն կ'ըլլամ:


2. Երբ Տէրոջմով մեռեալք յառնեն անամպ  
առտուն լուսածին,  
Եւ մանակցին իր Յարութեան սուրբ փառքին:  
Երբ ընտրեալներ երկինքէն անդին, իրենց  
տուն հաւաքուին.  
Եւ Փրկիչս անունս կարգայ, ես հոն կ'ըլլամ:

Երբ Փրկիչս անունս կարգայ: Եւայլն:

3. Օ՛ն, ուրեմն գործեմ, մինչ ցերեկ՝ արշա-  
 ւոյսէն մայրամուտ,  
 Պատմեմ Փրկչիս հրաշալի, սուրբ սէրն ու գուժ.  
 Եւ երբ գործերս հոս վերջ գտնեն, մահուան  
 գիշեր տիրէ մուժ.  
 Եւ Փրկիչս անունս կարգայ, ես հոն կ'ըլլամ:

Երբ Փրկիչս անունս կարգայ: Եւայլն:





## Ե Ր Գ Ա Չ Ա Տ Ո Ի Թ Ե Ա Ն



Ազատն Աստուած այն օրից  
Երբ հաճեցաւ շունչ փչել,  
Իմ հողանիւթ շինուածքին  
Կենդանութիւն պարգեւել:

Ես անբարբառ մի մանուկ  
Երկու ձեռքս պարզեցի,  
Եւ իմ անզօր թեւերով  
Ազատութիւն գրկեցի:

Մինչ գիշերը անհանգիստ՝  
Օրօրոցում կապկպուած,  
Լալիս էի անդադար՝  
Մօրս քունը խանգարած:

Խնդրում էի նրանից  
Բազուկներս արձակել՝  
Ես այն օրից ուխտեցի  
Ազատութիւնը սիրել:

Թոթով շեղուիս մինչ կապերն  
Արձակուեցան բացեցան,  
Մինչ ծնողքս իմ ձայնից  
Խնդացին ու բերկրեցան:

Նախկին խօսքն որ ասացի՝  
Չէր հայր կամ մայր կամ այլ ինչ.  
«Ազատութիւն» դուրս թռաւ  
Իմ մանկական բերանից:

«Ազատութիւն» ինձ կրկնեց  
Ճակատագիրը վերեւից,  
«Ազատութեան դու զինուոր  
Կամի՞ս գրուիլ այս օրից:

«Ո՞հ, փշոտ է ճանապարհդ,  
Ֆեղ շատ փորձանք կ'սպասէ,  
Ազատութիւն սիրողին  
Այս աշխարհը խիստ նեղ է»:

Ազատութիւն — գոչեցի —  
Թո՛ղ որտայ իմ գլխին  
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ —  
Թո՛ղ դաւ դնէ թշնամին:

Ես մինչ ի մահ, կախադան,  
Մինչեւ անարգ մահու սիւն՝  
Պիտի գոռամ, պիտ՝ կրկնեմ  
Անդադար — Ազատութիւն»:

Ե Ղ Բ Ա Յ Ր Ե Մ Ք Մ Ե Ն Ք



1. Ի բիւր ձայնից բնութեան չքեղ  
Թէ երգք թռչին սիրողարար,  
Մատունք կուսին ամենագեղ  
Թէ որ զարնեն փափուկ քնար:  
Չունին ձայն մի այնքան սիրուն  
Քան զանձկալի եղբայր անուն:

Տո՛ւր ինձ քո ձեռք, եղբայր եմք մենք  
Որ մրրկաւ էինք զատուած .  
Բաղդին ամէն ոխ չարանենգ  
Ի մի համարոյր ցրուին ի բաց .  
Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն:

2. Երբ ալեւոր Մայրն Հայաստան  
Տեսնէ զորդիս իւր քովէ քով,  
Սրտին խորունկ վէրքերն դաժան  
Քաղցր արտասուաց բուժին ցօղով:

Տո՛ւր ինձ քո ձեռք: Եւայլն:

3. Մէկտեղ լացինք մենք ի հնումն .  
Եկէ՛ք դարձեալ յար անբաժան  
Խառնենք զարտօսր և զլնդուժ  
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան:

Տո՛ւր ինձ քո ձեռք: Եւայլն:

5. Մէկտեղ յագնինք, մէկտեղ ցանենք,  
Մէկտեղ թափին մեր քրտինքներ,  
Զնունձ բարեաց յերկինս հանենք,  
Որ կեանք առնուն հայոց դաշտեր:

Տո՛ւր ինձ քո ձեռք: Եւայլն:

Ա Ր Ա Ք Ս Ի Ա Ր Տ Ա Ս Ո Ի Ք Ը



1. Մայր Արաքսի Ափերով  
Քայլամոյր գնում եմ .  
Հին-հին դարուց յիշատակ  
Ալեաց մէջը պտրում եմ:

Բայց նոքա միշտ յեղեյղուկ  
Պատու ջրոտ եզերքին  
Դարիւ-դարիւ խփելով՝  
Փախչում էին լալագին:

Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ  
Պար չես բռներ մանկական,  
Դու դեռ ծովը չի հասած  
Սգաւոր ես ինձ նման:

2. Ինչո՞ւ արցունք ցայտում են  
 Քո սէգ հպարտ աչերից,  
 Ինչո՞ւ արագ փախչում ես  
 Այդ հարազատ ափերից:

Մի՛ պղտորիլ յատակդ,  
 Հանդարտ հոտէ՛ խայտալով, —  
 Մանկու թիւնը քո կտրճ է,  
 Շուտ կը հասնիս դէպի ծով:

Վարդի թփեր թո՛ղ բուսնեն  
 Քո հիւընկալ ափի մօտ,  
 Սոխակները նոցա մէջ  
 Երգեն մինչեւ առաւօտ:

3. Մշտադալար ուռիներ  
 Սառ ծոցի մէջ քու ջրին  
 Ճկուն ստան ու տերեւ  
 Թող թաց անին տապ օրին:

Ափերիդ մօտ երգելու  
 Հովիւք թող գան համարձակ,  
 Գառն ու ուլը քու վճիտ  
 Ջուրը մտնին միշտ արձակ: —

Մէջքը ուռցուց Արաքսը.  
 Փրփուր հանեց իր տակից,  
 Ամպի նման գոռալով՝  
 Այսպէս խօսեց յատակից:

4. — « Խիզա՛խ, անմիտ պատանի,  
 « Նիրհըս ինչո՞ւ դարեւոր  
 « Վըրգովում ես, նորոգում  
 « Իմ ցաւերը բիւրաւոր:

« Սիրելի մահից յետ՝  
 « Ե՞րբ ես տեսել, որ այրին  
 « Ոտքից գլուխ պճնըւի  
 « Իր զարդերով թանկագին:

« Որի՞ համար զարգարւեմ,  
 « Որի՞ աչքը հրապուրեմ,  
 « Շատերն ինձ են ատելի,  
 « Շատերին ես օտար եմ... »

## Ս Ի Ր Ո Յ Ջ Ո Հ Ե Ր



Լըճի մէջ նաւակը մեղմ հողմիկ կը տանի,  
 Նորա մէջ նստած է սիրահար պատանի:  
 Պատանին ձեռքն ունի կիթարա ու կ'երգէ,  
 Իսկ քամին կը փախցնու նաւակը եզրքէ:  
 Լըճակին մէջ տեղ կայ քարաչէն մի ամրոց,  
 Սիրուհւոյ բնակարան՝ հանապսղ փակ ու գոց:  
 Պատանւոյ նաւակը դէպ ամրոց կը վազէր,  
 Ուր նորա անձկալին սրտատրոփ կ'սպասէր:  
 Մեղմ հովը աւելի, աւելի սաստկացաւ,  
 Երկինքը թուխպ պատեց, փոթորիկ բարձրացաւ:

Ալիքի լեռները գոռալով կը ծփան,  
 Պատանին աներկիւղ կը նուագէ կլիթարան :  
 Լուսինը ամպերու տակերէն երեւցաւ,  
 Սոսկալի ալէտի պատկերը բացուեցաւ :  
 Կէս ճամբան ալիքը նաւակին խփուեցան,  
 Նաւակը փշրեցին, յոյս չիկայ փրկութեան :  
 Պատանին աչքերը լուսնեակին բարձրացուց,  
 Կիթարի լարերը նա ուժգին հնչեցուց :  
 «Տա՛ր վերջին խօսքերս անձկալուոյս, ո՛վ լուսին,  
 Թէ քաղցրիկ անունդ յիշելով կը մեռնեմ » :  
 Դադրեցաւ փոթորիկ, ու ալիք պառկեցան .  
 Ջրի վրայ կտորտանք նաւակի երեւցան :  
 Սիրունին սրտատրոփ՝ նայեցաւ լճակին,  
 Հասկըցաւ դառնութիւն իւր անբաղդ վիճակին :  
 «Իրարմէ բաժնեցին մեզ աշխարհ և այս կեանք  
 Գէթ մահով այսուհետև ջրի տակ միանանք » :  
 Ասաց և աղաղակ բարձրացուց նա ուժգին,  
 Գլորվեց, զոհ եղաւ անկշտում ծովակին :

## Տ Ա Լ Ո Ւ Ո Ր Ի Կ



1. Տալուորիկի կտրինճ եմ խորթ,  
 Քաղքցու պէս չեմ թուլամորթ,  
 Սարի զաւակ, քարի սրգի  
 Հին քաջ Հայոց եմ մնացորդ :

Տալուորիկի զաւակ եմ քաջ,  
 Չեմ խոնարհիր վատին առաջ,  
 Քարտտ լերանց եմ աղատ լաճ,  
 Չեմ տեսել ոչ արօր ոչ մաճ :

Հայ աղբրտիք, վայ աղբրտիք,  
 Տալուորիկի զաւակ եմ քաջ,  
 Ազատութեան սիրոյն համար  
 Եկէք դէպ՝ ինձ յառա՛ջ յառա՛ջ :

2. Երբ իմ աչեր բացի աշխարհ,  
 Ազատ տեսայ մեր սար ու քար,  
 Մինչեւ փակեմ աչքս ի խաւար,  
 Պիտ՝ չկոխէ հոս ոտք օտար :

Իմ մամ ծնաւ զիս դալերու ծոց,  
 Ընկոյզի կոճղ մը զիս օրօրոց .  
 Տըկլող ծնայ, մեծցայ տըկլող,  
 Կեանքիս բաժինն է կռիւ ու բոց :

Հայ աղբրտիք : Եւայն :

3. Ոտքս բոպիկ, սիրտս միշտ բաց,  
 Ի՞նչ փոյթ թէ քոյրս ալ մերկ մնաց,  
 Իմ մօտ մէկ է արեւ, բուք, ձիւն,  
 Բաւ է չիշխէ հոս բռնութիւն :



Իմ կեանքս խիստ է և չարքաշ,  
 Փափուկ՝ կեանքի վայելց չեմ վարժ,  
 Բնակարանս է ապառաժ,  
 Ընկերս մրրիկ ու երկրաշարժ:

Հայ աղբրտիք: Եւայլն:

## Վ Ե Ր Զ Ս Բ Ա Ն

⋮

Լըռեց, Ամպերը եկան ծածկեցին  
 Երկինքն, ու լուսինն աչքէս խըլեցին,  
 Ս'ընացի մինակ՝ հոգիս վըրդոված,  
 Ձեռներս ծոցիս: գլուխս քարշ արած:  
 Եւ այնուհետեւ ամէն իրիկուն  
 Մընում եմ լուսնի խաղաղ ծագելուն.  
 Նորա տըխրամած դէմքը նայելիս՝  
 Յիշում եմ թըշուառ վիճակը ազգիս:  
 Ա՛խ, ցոլա՛, փայլէ՛, տըխրադէմ լուսին,  
 Գուցէ քու փայլից փայլ տաս և Հային:  
 Պատմէ շատերուն վարդանի մահը.  
 Կամ ի՞նչպէս կորաւ Հայ ազգի գահը,  
 Կամ ի՞նչ վեհ սիրով սիրում էր վարդան  
 Մայրենի հողը, — աշխարհ Հայաստան:

## Ե Ր Գ Ա Զ Գ. Ս Ս Հ Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ո Ի Թ Ե Ա Ն

⋮

1. Արի՛ք Հայկազունք, յառաջ ընթանանք,  
 Սահմանադրութեան նոր բարեւ մ'ալ տանք.  
 Որ ազգն երբ զանի փրկարար կոչեց  
 Նո՛ր հոգի, նո՛ր կեանք անոր պարգեւեց:

Եկէ՛ք բարեկամք, առ բարձրեալն Աստուած  
 Ուղղենք մեր մողթանք սուրբ սրտէ բղխած  
 Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ  
 Ազգն ու Սահմանադրութիւն:

2. Զրկանք բռնութիւն վատթար վարչութեան  
 Բերին մահն ի դուռն Հայոց ազգութեան.  
 Սահմանադրութիւնը եկաւ զայն վանեց  
 Եւ կինաց ուղին մեր առջեւ հարթեց:

Յառաջդիմութեան բացաւ ասպարէզ,  
 Ուր ամէն վայրկեան գոչել պարտ է մեզ.  
 Կեցցէ՛, կեցցէ՛: Եւայլն:

3. Հայերս անարգուած փրկեց բարձրացուց  
 Մարդկային կոչման մեզ արժանացուց.  
 Շնորհեց մեզի զոր ազատն Աստուած  
 Մարդկութեան երկրորդ նշանն է դրած:

Որուն շնորհիւ յարգ ստացանք մենք,  
 Անոր յարգ տալով ապրինք ու երգենք.  
 Կեցցէ՛, կեցցէ՛: Եւայլն:

4. Հայե՛ր, միանանք մեր մօրն հետ օրհնենք  
 Ձանոնք սր մեզի տունն սուրբ օրէնք.  
 Սահմանադրութեան բարեաց փոխանակ,  
 Թո՛ղ լարեն ուրախ կեանք մի փառունակ,

Թո՛ղ և մեր որդիք հետ անոնց անուան,  
 Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարգան,  
 Կեցցէ՛, կեցցէ՛: Եւայլն:

### Ա Ն Դ Բ Ա Ն Ի Կ Ի Ն



1. Իբրեւ արծիւ սաւառնում ես լիւս ու ժայռ,  
 Թնդացնում ես երկինք, գետին տենչավառ.  
 Սուրբ անունդ պիտի յիշուի դարէ դար,  
 Հսկայ լերինք քեզ ապաստան Անդրանիկ:

2. Հայոց կուսանք դափնեայ պսակ թող հիւսին  
 Քնքայ ձեռամբ քո ճակատը պսակեն.  
 Գոհարներով անվախ կուրծքդ զարդարեն,  
 Կեցցե՛ս յաւէտ դու անսասան Անդրանիկ:

3. Հայաստանի սոխակները քեզ համար,  
 Թող դայլայլեն գիշեր, ցերեկ անդադար,  
 Անյաղթ մնաս, դու քաջ կուռի սիրահար,  
 Հայրենիքի տէր և պաշտպան Անդրանիկ:

### Դ Ա Շ Ն Ա Կ Յ Ա Կ Ա Ն Խ Ո Ւ Մ Բ



Դաշնակցական խումբ գնանք մենք Սասուն,  
 Մեր քաջ ընկերներ մեզի կ'սպասեն.  
 Անդրանիկը քաջ իւր ընկերներով  
 Կ'սպասէ գարնան, կ'ուզէ պատերազմ:

Մօտ է գարունը, շուտով կը բացուի,  
 Հայու խօսքը քաջ շուտով կը լսուի,  
 Հայերն անվախ հոգևով միացած  
 Հրացան ուսին ստքի են կանգնած:

Խմբապետները հոգևով են երգուած,  
 Ֆէտայի ուժով գնում են առաջ,  
 Առաջն է կանգնում Անդրանիկը քաջ,  
 Գոռում է, գոչում, կ'ուզէ պատերազմ:

### Չ Ա Յ Ն Տ Ո Ւ Բ, Ո Վ Ֆ Է Տ Ա



Ձայն տո՛ւր, ո՛վ ֆէտա, ինչո՞ւ ես տրտում,  
 Լուս ու մուսջ նստած երկար մտածում,  
 Աւա՛ղ, երկար մտածում,  
 Տխուր երկար մտածում:

Շարժեցէ՛ք, տղերք, սրեր շողշողուն,  
 Թափեցէ՛ք կրակ թ շնամեաց գլխուն:

Գազան թշնամեաց գլխուն ,  
Դաժան թշնամեաց գլխուն :

Թափենք մեր արիւն իբրեւ ախոյեան ,  
Լինի առաջնորդ մեր ազատութեան ,  
Սիրուն մեր ազատութեան ,  
Անուշ մեր ազատութեան :

Շտապեցէ՛ք , ընկերք , խմբուել միատեղ ,  
Մետաքսէ գրօշակ ծածանի այնտեղ ,  
Թող ծածանի այնտեղ ,  
Սիրուն ծածանի այնտեղ :

## Մ Ա Ր Ս Է Յ Ե Է Զ

⋮⋮⋮

1. Արի՛ք սրդիք դուք Հայրենեաց ,  
Հասեալ է արդ մեզ օր փառաց .  
Դրօշ բռնութեան յարիւնթաթաւ  
Կանգնի ընդդէմ մեր զիմօգրաւ :  
Լըւա՞յք ի դաշտ պատերազմաց  
Զահեղ գոչիւն վայրագ զօրաց ,  
Գան խողխողել ի գիրկս ձեր  
Զորդիս , կանայս ձեր ի սուսեր :

Հապօ՛ն , ի զէն , քաղաքացի՛ք ,  
Կազմել ըզգունդ քաջամարտիկ .  
Օ՛ն , դիմեսցուք տալ ի յագուրդ  
Դաշտաց մերոց զարիւն անասւրբ :

2. Զի՛նչ , ժըպըրհի՞ն այդ վաշտք օտար  
Լինել երկրիս հրամանատար ,  
Զի՛նչ , այդ վարձկան փաղանդ անաստ  
Զգոռ մեր մարտիկն արկցի՛ն տապաստ :  
Այլ աղէ՛ , Տէ՛ր , ձեր ըստրկաց  
Արկցի՛ն զմեօք զլուծ չարեաց ,  
Եւ տիրապետք՝ անարգք անդրէն՝  
Լիցի՞ն բաղգից մեր անօրէն :

Հապ օ՛ն , ի զէն , քաղաքացիք : Եւն :

3. Նուիրական սէր հայրենեաց ,  
Օգնեա՛ ի վրէժ՝ մեր կուռ բազկաց .  
Ազատութի՛ւն մեզ կաթոգին ,  
Ընդ քո պաշտպանս մարտի՛ր ուժգին :  
Արդ՝ յաղթութեան ընդ մեր դրօշու  
Հասցէ՛ ի ձայն քո քաջազու ,  
Եւ թշնամիք քո ոգեսպառք  
Տեսցեն զմեր փառս , քո զյաղթանակ :

Հապ օ՛ն , ի զէն , քաղաքացիք : Եւն :

## Խ Ա Ն Ի Ե Ր Գ Ը

⋮⋮⋮

1. Լուսին չկար , մութ գիշեր էր ,  
Մի խումբ կ'երթար արագ արագ .  
Տեսանք որ քաջ խանի խումբն էր ,  
Զինուած էին բոլոր նրանք :

2. Կեանքերը ազգին նուիրած ,  
 Կտրիճ իմանը առաջ ընկած .  
 Գնում էին տաճկաց սահման ,  
 Թռչում էին ինչպէս կրակ :
3. Ահեղ կռիւն ահա սկսեց ,  
 Երկու անյաղթ թշնամեաց մէջ .  
 Բիւր զօրքերին զխմադրեցին ,  
 Փառաց պսակ վաստակեցին :
4. Երբ քաջ իմանը հրահանգ կուտար ,  
 — Արի՛ք սախւծներս իմ քաջ .  
 Մտան թշնամու խիտ շարքեր ,  
 Կոտորեցին ձախըն ու աջ :

ԽՆԴԱ՛, ԵՐԲ ԿՐՆԱՍ (\*)



1. Երբ գործերը ձախող կ'երթան ,  
 Աշխարհ դառնայ ծով վրդով ,  
 Մի անցներ ժամանակդ  
 Մտահոգուած խռովքով :  
 Մինչ անստոյգ է կեանքն յար ,  
 Խոհեմ կերպն որ կուրծք տաս ,  
 Փորձութեանց միշտ քաջաբար ,  
 Եւ խնդալ երբ որ կրնաս :

(\*) Smile when ever you can. Եղանակը պատրաստուած ֆրոժ. Ս. Էովիւրեանի կողմէն, Ամերիկա :

(ԽճԲ.) Խնդա՛ երբ որ կրնաս , խնդա երբ որ  
 Ճամբադ աւելի՛ լոյս կըլլայ , [կրնաս ,  
 Կրցած ատենդ երբ խնդաս :  
 Խնդա՛, երբ որ կրնաս , խնդա՛ երբ որ  
 Ճամբադ աւելի լոյս կըլլայ , [կրնաս :  
 Կրցած ատենդ երբ խնդաս :

2. Ինչո՞ւ վաղը քեզ վախ տայ ,  
 Այսօրին մեզք ընելով .  
 Ձի երբ հոգը փոխ կառնես ,  
 Հարկաւ վճարես պիտ' չուտով :  
 Կարժէ յաւէտ քարոզել  
 Բարի առածը հին .  
 Պէտք է անցնիլ կամուրջէն ,  
 Երբ չես հասած դեռ գետին :

Խնդա՛, երբ որ կրնաս : Եւլն . :

3. Թէև ուժով՝ ես առոյգ ,  
 Թերեւս քսակով՝ նիհար ,  
 Եւ աշխարհ , աւելի ունի  
 Գէշ փորձանքներ քեզ համար .  
 Բայց թէ՛ վիշտ կամ խնդութիւն  
 Կարճ կեանքիդ գան ի սպաս ,  
 Ճամբադ աւելի լոյս կըլլայ ,  
 Կրցած ատենդ երբ խնդաս :

Խնդա՛, երբ որ կրնաս : Եւլն . :

## Թ Է Թ Ե Ի Ո Ի Ն Է Ի

:::

Թ է թեւ ունէի,  
 Ո՛հ, կը թուչէի  
 Ազատ Մասեաց սարերն ի վեր ես ուժգին .  
 Անկէ ձեզ, Հայե՛ր,  
 Կարգայի հրաւէր .  
 Թ՛եկէ՛ք, Հայեր, ըլլա՛նք մէկ սիրտ մէկ մարմին,  
 Սիրեմք ընկեր զընկեր՝ սիրեմք կաթողին :

Թ է դեռ յիմ արիւն  
 Ձի խառնուէր թոյն,  
 Դեռ երակացս մէջ աշխոյժ խաղային,  
 Ո՛հ, քանի՛ հպարտ  
 Կանչէի ազատ  
 Թ՛եկէ՛ք, Հայե՛ր, ըլլանք մէկ սիրտ : Եւայլն :

Թ է կեանք ունէի,  
 Ո՛հ, կը լարէի  
 Թեւ քնարի բողբոխ հայոց անկենդան,  
 Որ նա ձեզ խօսէր,  
 Ձեզ պանգուխտ հայե՛ր,  
 Թ՛եկէ՛ք, Հայեր, ըլլանք մէկ սիրտ : Եւայլն :

Թ է սէր ըլլայի  
 Կամ անմաշ հողի,  
 Կը կապէի Հայոց սրտերն անմեկին,

Յայնժամ և նոքա

Մի սրգիք Հայկոյ

Կ'ըլլան ի մի անշուշտ մէկ սիրտ մէկ մարմին,  
 Սիրեմք ընկեր զընկեր, սիրեմք կաթողին :

## Մ Ա Ր Տ Ի Կ Ի Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն

:::

1. Կուուեցէ՛ք տղերք, կուուեցէ՛ք քաջ քաջ,  
 Անվեհեր կանգնած թշնամուն առաջ,  
 Յանկալի է մեզ միշտ ազնիւ մահը,  
 Հեռու մեզանից սոսխի անը :

Յառաջ խիզախենք իրրեւ նահատակ,  
 Ի զուր թող չանցնի մեզնից մի գնդակ :

2. Մեզ տօնախմբին մեր նախնի քաջեր,  
 Մեզի կ'սպասեն մեր հէզ եղբայրներ .  
 Ազատ չծնանք, գէթ մեռնինք ազատ,  
 Մեր սիրտն ու հոգին պահենք անարատ :

Դեհ կուուինք, տղերք, մինչև շունչ վերջին  
 Արժանի լինինք փառաց պսակին :

3. Մեռնինք յուսալով, մերն է սպագան,  
 Մեռնինք, բայց կեցցէ՛, կեցցէ՛ Հայաստան .  
 Այսպէս յորգորեց և ինկաւ արին,  
 Թողլով մեզ անուն յիշատակ բարին .

Ահեղ կուուի մէջ մի փոքրիկ հերոս,  
 Անմոռանալի կտրիճ մարտիրոս :

## Չ Ա Յ Ն Տ ՈՒ Ր



Չայն տուր, ս'վ ծովակ, ինչո՞ւ լուռ՞ ես.  
Ողբակից լինել չկամի՞ս դժբաղդիս:  
Շարժեցէ՛ք զեփիւռք, ալիքը վէտ վէտ.  
Խառնեցէ՛ք արտասուքս: այս ջրերիս հետ:

Հայաստանի մէջ անցքերին վրկայ,  
Սկիզբից մինչ այժմ, խնդրեմ, ինձ սոս',  
Մի՞թէ միշտ այդպէս կը մնա՞յ Հայաստան,  
Փըջալից անապո՞տ երբեմն բուրաստան:

Մի՞թէ միշտ այդպէս ազգը խղճալի,  
Կը լինի ծառայ օտար իշխանի:  
Մի՞թէ Աստուծոյ աթոռին մօտին,  
Անարժա՞ն է Հայ և Հայի որդին:

Արդեօք գալո՞ւ է մի օր, ժամանակ,  
Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ,  
Եւ ամէն կողմից պանդուխտ հայազգիք,  
Դիմել զէպ իւրեանց սիրուն Հայրենիք:



## Ա Ռ Հ Ն Չ Ա Կ



1. Հեռաւոր երկիր նստած դու նժդեհ՝,  
Հայրենեաց բազդին մօտուստ ես տեղեակ.  
Բարոզ քաջարի նոր սկզբանց վեհ,  
Յեղափոխութեան ձայնատու ՀՆՉԱԿ:
2. Նոր գաղափարի քս ցանած սերման  
Սկզբիւ պտուղներ հասուննան արագ.  
Կարին եւ Պոլիս սրտաման նման  
Անդրանիկ շարժմունք ծնան քեւ ՀՆՉԱԿ:
3. Չար բռնակալը Հայոց կեղեքիչ  
Վախէն պահուեցաւ սակի գահին տակ,  
Խուլ եւրոպայի թնդաց մէն գահլիճ,  
Հայը ցնցուեցաւ, կարմրեցաւ ՀՆՉԱԿ:
4. Այսօր քս սերմանց նոր պտուղք ան  
Հասած կարմրին արեան նմանակ.  
Կենաց և մահու սուրբ ժամ մերձենայ,  
Կարմիր հրաւերիդ ակն ունինք, ՀՆՉԱԿ:
5. Կոչնակդ հնչեցո՛ւր հնչեցո՛ւր արեկ  
Թող Հայք ստք ելլեն ծագէ մինչեւ ծագ:  
Փշրի ժանտ շղթան, ծագէ նոր արեգ,  
«Ազատ ենք» հնչէ՛ սակեղօժ ՀՆՉԱԿ:

## ՅԱՆԿ ՇՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐՈՒՆ

Ամէն բան կը զոհեմ	43
31) All to Jesus I surrender	
Ամէն . Հայր սուրբ (Շարական)	78
Ամէն տեղ կ'երթամ	45
14) Anywhere with Jesus I can	
Աշխարհ ամենայն (Շարական)	29
Առաւօտ լուսոյ (Շարական)	13
Աւետիս մ'անուշ հրեշտակի	25
55) A message sweet is borne	
Բախէ', բախէ' մէկը բախէ սրտիդ դռնակ	66
43) Knocking, Knocking	
Բաշխէ' դու կենաց հաց	80
Break thou the bread of Life	
Գետէն անդին դէմքեր	75
36) Over the river faces I see	
Գերազմայլ սուրբ խոկմանս պահուն	59
There is a land mine eyes	
Գիտեմ թէ իմ Հայրս գիտէ լաւ	35
106) I know my heavenly father	
Դուռն օտարական մը կայ	64
63) There's Stranger at the door	
Եկէ'ք, պանծացնենք	17
122) Let us exalt the name	
Եղիցի անուն Տեառն օրհնեալ (Շարական)	15

Երբ կեանքի ծովուն վրայ	23
22) When upon life's billows	
Երբ կ'զգամ հաւատքս տկար	33
When my faith	
Երբ հիւզակին մէջ փոքր	74
69) Oft within a little cottage	
Երբ զերջ գտնեն	36
126) When my life Work is ended	
Երբ տառապած հոգիս	46
57) When troubled my soul	
Երբ Տէրոջ փողն հնչէ	99
67) When the trumpet of the Lord	
Երբ փոքր էի դեռ	72
13) When I was but a little	
Երգէ Փրկչին սէրն հրաշալի	19
43) Sing the wondrous love	
Էն գեղանին երկրիս վրայ	48
62) Fairest of all the earth	
Թէ արեւներ մեծապայծառ (Ակիւլիցե)	79
Թէեւ ձեր մեղքեր կարծիր	50
Though your sins be as	
Թողէք զէմին շուքին (Թրգ. Յ. Գալսեան)	95
In the shadow of the rock	
Ի՛նչ հիանալի Փրկիչ մը	30
140) Such a wonderful Redeemer	
Ի՛նչ մտերմութիւն	70
84) What a fellowship	
Ինչո՞ւ պարտապ հոս (Թարգ. Հ. Շիրոյեան)	98
Ի՛նչ քաղցր իր (Թարգ. Յ. Թրգարեան)	87
139) Sweet are the promises	

Իր թևերուն շուրին տակ	71
72) In the shadow of His Wings	
Իր շնորհք բաւական էր	26
101) His grace was sufficient	
Լոյս , Արարիչ (Շարական)	20
Լսեցէք ձայնն թշուառաց (Թրգ. Յ. Գայսեան)	91
Hark the Macedonian Cry	
Խորհուրդ մեծ և սքանչելի (Շարական)	38
Ծափ զա՛րկ , աշխարհ (Թարգ. Գիսակ)	40
Joy to the World	
Կայ գեր ի վեր մէկը	34
121) There's one above	
Կ'ուզե՞ս ազատ ըլլալ	32
5) Would you be free	
Հապ ո՛ն , արիք զինուորներ (Ակիւլիֆե)	89
Հոգւոյդ համար՝ անձկակէզ	63
85) While we pray	
Մահէս վերջը սիրելիներ	84
Մենք հին մեծ երգէն	15
87) We are never, never	
Մեր վէմն է Տէր	77
The Lord's our rock	
Մէկ բան կը խնդրեմ	51
24) One thing I of the Lord	
Մէկը սիրունը՝ ը՛ծայ մ'ըրաւ	86
109) Somebody made	
Յիշեսցուք ի գիշերի (Շարական)	67
Նորաստեղծեալ բանն յանէրց (Շրկն.)	53
Շիրմին խորն՝ անկենդան	83
40) Low in the grave	

Ո՛հ , արեքներ , այս ինչ (Թարգ. Հ. Շիրոյեան)	97
Send the light	
Ո՛հ , էն լաւ բարեկամն	69
91) Oh, the best friend	
Ո՛հ , ինձ տրուէր հազար լեզու	18
80) Oh! for a thousand	
Ոչ , թէև ընկճըւած , խաչուած (Ակիւլիֆե)	88
Ո՛վ չքնաղ օր	24
76) O golden day when light	
Ով սէ՛ր , որ գիտ թեզ	22
92) O love, that wilt not	
Ուր որ ալ ըլլաս դուն (Թարգ. Յ. Գայսեան)	94
Wherever you may be	
Պէ՞տք է երթամ՝ և ձեռնուձայն	62
53) Must I go and empty	
Պէտք է փրկիչս հեարս առնեմ	44
15) I must have the Savior	
Սիրազ ամոջու՞ծ է	41
29) Crowded is your heart	
Սուրբ , սուրբ , սուրբ (Շարական)	59
Տարածեալ (Շարական)	47
Տէ՛ր , փոթորիկն է (Թարգ. Յ. Գայսեան)	92
Master the tempest is raging	
Փառք ի բարձունս (Շարական)	39
Փրկչիս հետ երես առ երես	61
30) Face to face with Christ	
Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ (Շրկն.)	58
Օ՛ն , արի՛ք , ազայք փրկութեան	55
99) Rise, ye, children	
Օ՛ն , հայ պատանիներ (Ակիւլիֆե)	12



Օ՛ն, փրկչին զինւորներ (Թրգ. Գ. Գալուսեան) 56	
Onward Christian soldiers	
Օրհնեալ Յիսուս, իմն ես գուն 52	
2) Blessed Jesus, thou art mine	
Օրհնութի՛ւն, փառք 82	
Blessed be the fountain of blood.	
Օր մ'արծաթի պիտ' փրթի թել 28	
Some day the silver cord will break	



ԾԱՆՈԹ. — Թարգմանողին անունը չնշանակուած երգերը Հայերէնի վերածուած են Վեր.  
Հ. Ս. Խանգամուրի կողմէ:

## ՅԱՆԿ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐՈՒ



Ազատն Աստուած այն օրից 102	
Արիք հայկազունք, յառաջ ընթանանք 111	
Արիք սրգիք, գուք հայրենեաց 114	
Գաշնակցական խումբ գնանք մենք 113	
Երբ գործերը ձախող (Թարգ. Ակիլիից) 116	
Smile whenever you can	
Թէ թեւ ունէի 118	
Ի բլւր ձայնից բնութեան շքեղ 104	
Իբրեւ արծիւ սաւառնում 112	
Լճի մէջ նաւակը 107	
Լուսին չկար, մութ գիշեր էր 115	
Լռեց. ամպերը եկան 110	
Կռուեցէք, աղերք 119	
Հեռաւոր երկիր 121	
Չայն տո՛ւր, ով ծովակ 120	
Չայն տո՛ւր, ով Ֆէտա 113	
Մայր Արաքսի ափերով 105	
Տալուարիկի կտրիճ եմ 108	

Վ Ի Պ Ա Կ



Էջ	Տող	Սխալ	Ուղիղ
7	4	չէր կրնար	—
10	6	քոյ	գոյ
22	1	Տէր	սէր
24	2	չեն	չե՞ն
26	թիւ	109	101
44 վարէն	4	փակ	խակ
45	9	փրփուն	փրփրուն
46	10	հանգիստ կը փնտռէ	կը փնտռէ հանգիստ
52 վարէն	1	ձգած թեզ	թեզ ձգած
56	16	սողը նորէն կրկնելու է	
86 վարէն	6	իւր օրեր վատ- նեց ի զուր	ի զուր վատ- նեց իւր օրեր

on.

**ՄԱՏԵՆԱՇԱՐ**  
**ՀԱՅ. ԵՐԻՏ. ՔՐԻՍՏ. ԸՆԿ.ԵԱՆ**

Թիւ 1.— ԵՐԳԱՐԱՆ

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ Է

Թիւ 2.— ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ

ԱՌՈՂ, ԶԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Գրեց՝ ՏՕՔԹ. ՇԱՄԼԵԱՆ



**ՀԱՍՏԷ:**

**ԳԱԶԻՐԷ, ARMENIAN Y. M. C. A.**

**American Mission**

Կ. ՊՈԼԻՍ

ԵՂԶ ԳՐԱԳԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



02



20 01159 02 9

Յ. Ն.

Արեսասահման 75 Սանքիմ